

Am 1600
2

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՐՐԵՍՏՈՄԱՏԻԱ

III ԴԱՍԱՐԱՆ



491.99-8

S-26

ԿԱԶՄԵԾԻՆ
Ս. ՏԱՐՈՆԾԻ
ԳՂԱԶԱՐՅԱՆ

Է. Դանյան

ՊԵՏՆԱՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1934

Am. 1600

Арм.
2-141a

491.99-8
5-26

ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ
ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՍՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ՝

Ս. ՏԱՐՈՆՑԻ

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հաստատված է ՀՍԽՀ Լուսավորման տնի կողմից

Г.П.Б. в ЛНГР.

А. 1934 г.

Акт № 165

Инв. № 21354

ԳՐԱԿԱՆ — ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1934



4128-87

Պատ. խմբագիր՝ Մ. Մկրտչյան
 Լեզվ. խմբագիր՝ Հ. Պետրոսյան
 Տեխ. խմբագիր՝ Գ. Չենյան
 Նկարներ՝ Հ. Շափարյան
 Սրբագրեցին՝ Ս. Փարսադանյան և Մ. Քեչյան

Հանձնված և տրտադրույթյան 9 մայիսի 1934 թ.
 Ստորագրված և ապկու 19 մայիսի 1934 թ.

Գլխավոր № 8551 (ր). Պատվ. № 830 Հրատ. № 2982 Տիրում 40000

Պետհրատար տպարան—Յերեվան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Մի յերգ գիտեմ յես աննման—
 Հզոր մուրճի թափի նման,
 վորոտի պես հատու, խրոխտ
 մի յերգ գիտեմ յես աննման:

Ծնվել և նա մութ հանքերի
 մեռաղակուռ յերակներից
 ու ճայն առել քլունդների
 ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից

Մնունդ առել, ջիղ ու արյուն՝
 բանուկ, ուժեղ բազուկներից,
 գործարանը խանդ ու ավյուն
 չնչեշ նրան իր ժխորից:

Հմայք ունի յերգս այնպես,
 հոգսի ժամին թե վոր յերգես՝
 թախիծ ու վիշտ կհքանա—
 լքված հոգուն նեցուկ և նա:

Հե՛յ, իմ յերգը միշտ աննման—
 Հզոր մուրճի թափի նման,
 վորոտի պես հատու, խրոխտ—
 մի յերգ գիտեմ յես աննման:

Վորպես դող բռնած, զայրացած առյուծ
չողեկաթսան ե յեռում, մռնչում,
հակա՛, հրեղեն լեզուներ հանած՝
դժոխքի նման հնոցն ե փնջում:

Վեթխարի դազան հնոցի առաջ
բոց ու կրակի տապից թառամած՝
մեր կաթսավարը հսկում ե նրան՝
ուշքն ու միտքը ջրչափին հառած:

Ամառ ու ձմեռ նա զովի կարոտ—
քրտինք ե ծորում դալուկ ճակատից,
վոր ախոսելով յերեսը մրոտ,
սև հացի դին ե պահանջում բախտից:

Յեւ մի սև որ ել կաթսան պայթելով,
հեզ կաթսավարին կզրկի կյանքից.
հալա՛լ են հացը, ուլ արյան դնով
կխլի նրան հնոցի կրծքից:

ՔԱՋ ՊԱՀԱԿԸ

Լեվոնիկը նոր եր վերադարձել պիտներական լազե-
րից: Նրա փոքրիկ յեղբայրն ու քույրը մեկ-մեկու յե-
տեից հարցեր եյին տալիս.

— Անտառումն եյի՞ք, — հարցնում ե Բարկենը, —
բա դադաններ չկայի՞ն:

— Ինչի՞ չե, կային, բայց ուրիշ տեսակ դադան-
ներ... յերկոտանի...

— Վո՞նց թե յերկոտանի, եդ հո հավերն են յերկո-
տանի...

— Ա՛յ, պատմեմ լսե՛ք... Մի յերեկո պահակու-
թյան հերթն իմն եր: Ամբողջ որն անհամբեր սպասում
եյի, թե յե՞րբ կգա իմ ժամը: Վերջապես խարույկի
ղրույցից հետո պահակապետն ինձ հայտնեց, վոր գնամ



իմ հերթին: Յեռ ել փայտս առա, ու ծախ նման թուա
դեպի լազերի մուտքը:

Կանգնեցի փայտն ուսիս դրած ու ձգվեցի, ինչպես
խեղական կարմիր բանակային: Առաջին անգամն եյի

պահակ կանգնում, բայց մտածում եյի—ի՞նչ կա վոր,
թեկուղ մինչև առավոտ կանգնեմ:

Մի քիչ ժամանակից հետո մեկ ել տեսնեմ՝ ինչ վոր
մութը բաներ են շարժվում դեպի ինձ ու ինչ վոր ձայներ
են լսվում—մը՛րթ-մը՛րթ, խը՛րթ-խը՛րթ—կարծես դա-
դաններ լինեն:

Մեկ մտածեցի, թե կարելի յե չներ են, բարձր բղա-
վեցի.

— Մ՛ շուն, կորի՛:

Նրանք կանգ առան, բայց հետո ելի սկսեցին շարժ-
վել, ելի մը՛րթ-մը՛րթ, խը՛րթ-խը՛րթ անելով:

Ձե՛, չներ չեն, ուրիշ բաներ են... փայտս պատրաստ
կանգնեցի, վոր պաշտպանվեմ:

Սպասում եմ ու աչքերս չռած նայում. տեսնում եմ,
վոր շան նման են, վոր դադանի. մեկ սողալով են դալի,
մեկ բարձրանում, մեկ-մեկ ել ինչ վոր սպիտակներ են
յերևում...

Հանկարծ մի փոթկոց լսեցի, հետո՝ յերկու փռթ-
կոց... հետո յե՛լ՝ ծիծաղ... ա՛յ քեզ բան,—ասում եմ,
ինքս ինձ. ես ի՞նչ տեսակ դադաններ են, համ մը՛րթ-
մը՛րթ են պնում, համ ել ծիծաղում...

Տեսնեմ՝ վորտի կանգնեցին ու բղավեցին.

— Բարեկ՛ն, վախի՛լ մի, մենք ենք...

— Ովքե՞ր եք,—բղավեցի յես խիստ ձայնով:

— Պավլիկն ու Սիմակը:

— Աղդանչա՛ն:

— Խարու՛յկ:

— Մոտեցե՛ք:

Նրանք ծիծաղելով մոտեցան ինձ, խի՛ յես, վորպես
պահակ հրամայեցի:

— Կանգնել հանդի՛ստ:

Նրանք կանգնեցին առաջս:

— Վո՞րտեղից եք դալիս:

— Շատ հեռվից,—ասաց Սիմակը ծիծաղելով,—

հենց լազերից... ուղղում եյինք կատակ անել, համա
լավ քաջ ես յեղել, չվախեցար...

Դու մի ասի՛լ՝ այդ անպիտաններն ուղեցել են ինձ
վախեցնել, եդպես մը՛րթ-մը՛րթ անելով դալիս են, մի-
թամ դադաններ են: Վերաբերունքով ծածկվե՛լ են: Բայց
մեկ-մեկ նրանց շորերն սպիտակին եյին տալիս:

Յես շվացրի. գիտե՞ք՝ ի՞նչ լավ ե գիշերը շվացնե-
լը...

— Դե լա՛վ, Բարեկն, թող տուր՝ գնանք,—ասաց
Սիմակը, ել ո՞ւր ես շվացնում:

— Պահակապետին կանչում եմ, վոր նրան հանձնեմ
ձեզ:

— Ձի՛ հարկավոր...

Նրանք ուղղում եյին ինձ փորձել—մթամ տեսնենք—
գիտե՞ կանոնները թե չե: Բայց յես շատ լուրջ եյի, խ-
կական պահակ եյի, համաձայնեցի:

Քիչ անց յեկավ պահակապետ Սիմիկը:

— Ի՞նչ ե պատահել:

Յես հայանեցի, վոր բնկերներն ուշացել են, չասի
թե նրանք ինձ ուղղում եյին վախեցնել. ի՞նչ կարեք կար,
յես հո վախկոտ չեյի...

— Ովքե՞ր են:

— Պավլիկն ու Սիմակը:

Նա մոտեցավ:

— Վո՞րտեղից եք դալիս:

— Լազերից:

— Ի՞նչ...

Ընկերները պատմեցին իրենց կատակի մասին:

Սիմիկը քիչ եր մնում ծիծաղի, բայց իրեն զսպեց:

— Ձեզ նկատողություն եմ անում,—ասաց նա.—
հետեցե՛ք ինձ:

Ու քայեց դեպի մեր բաղան:

... Հիմա խմացա՞ք, թե ի՞նչ դադաններ եյին. յերկո-
տանի դադաններ... եդ անպիտան Պավլիկն ու Սիմակն
եյին...

Արդեն դնացել եր հայրը, յերբ արթնացավ:
Շտապ հալալ շորերը և թռավ փողոց:
Վազ, վազ, վազ անցավ իրենց փողոցը
և ընկավ կարմիր Հրապարակը՝ բանվորներով փողոց:

Ծփում եր կարմիր Հրապարակը
վոնց վոր մարդկային մի անասուն:
Հավաքվել եր վոնց վոր
աշխարհը բովանդակ:
Դիվեր բանվոր մարդիկ՝
հոր պես հաղած:
Դրոշակներ անթիվ,
անթիվ պլակատ:

Հրմշտեկելով մարդկանց ու բռնեկով՝
փորձեց առաջ յերթալ, հորը կոչել:
փորձեց յեյնել կողքի մի բանվորի վրով՝
բայց բանվորը—պապի ձեռնափայտը հո չե՞ր:
Եղպես սեղմած—մնաց:
Փորձեց ելի:
Պատահեց մի մարդ հայհոյող:
Նորից մնաց՝ հոգին մորմոքով լի:
Բայց ի՞նչ տեսներ—իր են մի թիղ բոյով...

Հանկարծ մի ծով ամբողջ
վոնց վոր գոռա—
դրոգաց հրապարակը,
գոռաց ուռա:
Հետո լռեց ամբողջը.
բանվոր մի կին
իր կողքի ընկերովը
չնչաց՝
«Լենինը...»

Փախաց սա յեւ կողքինին,
Ու շրթից շուրթ անցավ՝
«Լենին, Լենին...»

Հասկացավ իվանը
— ենտե՛ղ ե նա...
Շփոթված՝ գլխարկը հանեց—
յեւ սեղմեց առամները՝ բարկությունից դեղնած:
Եւ ճար չկար: Տեսավ՝ տեղ չե՛ն տա իրեն:
Յեւ վորոշեց՝ անի, ինչ եւ լինի—
Վտաքը խոթեց հանկարծ գրպանը կողքինի—
և բարձրացավ վրե՛ն...
Թռավ, ուսին նստեց
մի բանվորի,
բայց բանվորը ներքե չպրտել
չփորձեց եղ խոխին նորից...

Պտույտ յեկավ գլուխը, սիրտը ամուր թակեց:
Վոնց վոր աշխարհը վողջ նվիրեցին նրան:
Նայեց... Լենին քեռին կանգնած ե տախտակե
ամբիոնի վրա...
Ձեռքը առաջ մեկնած, գլուխը բաց՝
վոնց վոր տնում կախած են նկարի խորքից—
իր հայրիկի ձայնով, մի փոքր բարձր՝
նա պատգամ եր ասում բանվորական զորքին...

Յեւ իվանին հանկարծ ենպես թվաց,
թե տեսել ե նրան վաղուց.
վոր եղ Լենին—քեռին պիտի սիրեր իրան,
յեթե տեսներ «բուրժույ», «գորք» խաղալիս,
ու մտածեց՝ եզուց յերթալ, տեսնի նրան,
ասի՝ ինձ եւ զրկի՝ գնամ բանակ.
ասի՝ ուղում եմ յես կարմիր շոֆեր դառնամ—
Լենին քեռուն բոլոր պլանները բանա...

Նրանք փոքրիկ եյին՝ յերեխան ու չափուն,
մեկտեղ խաղում եյին տախտակներէ վրա,
մինչև մութն իջնէր, մինչև հայրը դար տուն
ու հողագույն հացով կերակրեր նրանց:
Հայրը բանվոր եր: Միշտ առաւիտ ծեղին
նա գործարան կերթար ու յետ կդար մթին.
Հաց կրէրեր իրա յերեխային միջիչ,
յերեխան ել կտար՝ կեսը կատուն ուտի:

Եսպես ապրում եյին: Հայրը նրանց մեկ-մեկ
բան կպատմէր դրսի, հարուստների մասին,
վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում յերեք.
«Ինտերնացիոնալ» կերպեր՝ յերեխան շտի:

Ու կպատմէր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
պիտի արյուն թքի, վոր չոր փշրանք դա տուն.
ու լուծյուն դարձած՝ իրիկնային մութին
կլսեյին նրան յերեխան ու կատուն...

Բայց մի որ, մի որ կարմիր՝
գործարան չգնաց ել հայրը.
աչքերում մէկու կար մի,
Ժպիտը հաստատ ու անծայր եր:

Փողոցում մարդիկ, մարդիկ.
դրոշները արթնան... կարծես տուն եր...
ու նման եր մայրիսյան վարդի՝
որերում այդ հոր խնդությունը:

Յեւ մի որ համբուրեց պալատին
բանվոր հայրը, ձեռքին հրացան.
համբուրեց աչքերը կառվի
ու գնաց անծայն...

Բայց դարձաւ դռնից բանվոր հայրը,
համբուրեց նրան վերստին,
—«հասկանո՞ւմ եք,—Ժամանակն ե՛.
դարկելու յենք հարստին»:

Ու յեւով: Փողոցում կրակոց եր:
Փողոցում չոքեց բանվոր հայրը:
Ձորքերով լիքն եր փողոցը:
Փողոցում չոքեց բանվոր հայրը:

Ձարկեցի՞ն... Ճչաց բանվոր հայրը.
հարվածը կրծքին եր հատու:
Բայց հառաչը խոր ու անծայր այն
լսեցին յերեխան ու կատուն...

Վաղեց, վաղեց փողոց փոքրիկ յերեխան.
կատուն վաղեց հետքից իր ընկերով փոքրիկ:
Նրանց գլխին կարկուտ կարմիր գնդակ տեղաց,
ու յերկունս ել ընկան հայր բանվորի կողքին:

Ձխաղացին նրանք ել հատակի վրա.
չսպասեցին ել դուր՝ հայրը դա տուն.
նրանք փոքրիկ, փոքրիկ նահատակներ յեղան—
յերեխան ու կատուն:

ԿԱՐՄԻՐ ԱՐԱԳԻԼ

1

Բուլղարական Բրազա քաղաքում լո՛ւռ, ընդհանուր
անհանգստություն եր տիրում: Անհանգիստ եր վոստի-
կանությունը, անհանգիստ եյին քաղաքացիները: Յեր-
կու կողմն ել ահով սպասում եյին ինչ-վոր արտակարգ
դեպքերի:

Վաղը մայիսի մեկն էր և իշխանությունը կարգադրել էր՝ վո՛չ մի ցույց, վո՛չ մի դրոշակ, վո՛չ մի համախմբում: Կարգադրված էր նույնիսկ, վոր այդ ուր կարմիր կտոր չլինի անգամ տների պատուհաններում, խանութների ցուցափեղեկերում և թե մարդկանց վրա: Առհասարակ կարմիրը, վորպես հեղափոխության նշան, չպետք է յերևար քաղաքում:

Այդ էր պատճառը, վոր վոստրիկաններն այժմ վանից չըջում էին փողոցները—դնում պատուհաններն ու խանութները, անգամ կտուրները՝ տեսնելու, թե կարմիր դրոշակ չե՞ն ամբացնում վորևե տեղ, կամ թուուցիկ չե՞ն փակցնում: Գիտե՞ին, վոր կոմունիստները համարձակ մարդիկ են, կարող էին հանկարծ մի այնպիսի բան անել, վոր քաղաքի իշխանությունն ու վոստրիկանությունը խայտառակվեր կենտրոնական կառավարության առաջ: Դրանից էր, վոր նրանք կրկնապատկել էին իրենց հսկողությունն ու յեռանդը:

2

Յեւ վոստրիկանների ուժեղացած այդ հսկողությունը, ինչ ասել կուզի, անհանդատացնում էր քաղաքացիներին, վոմանք վախենում էին խուղարկությունից, ձեռքակալությունից, իսկ քաղքենիները՝ անսպասելի աղետներից:

Բայց այդ ուրն ամենից ավելի անհանդիստ էին յերկու փոքրիկ տղա—Պետկոն ու Նրիստոն: Գեռ մի քանի ուր առաջ դրանք վորոշել էին՝ մայիսի մեկին, ընկերներին հետ, կարմիր դրոշակով դուրս գան փողոց և մասնակցեն հասակավորների միախնդին (լսել էին, վոր այդպիսի միախնդ պիտի չլինի), հետո այցի գնան հինգ տարի առաջ սպանված հեղափոխականների զերեզմաններին, ուր թաղված էին նաև Պետկոյի հայրը և Նրիստոյի մեծ յեղբայրը: Բայց իշխանության սպառնալից արգելքն ամբողջովին քանդում էր նրանց ծրագիրը, և

նրանք այժմ անհանդիստ մտածում էին՝ այնուամենայնիվ մի բան անեն, մի այնպիսի բան, վոր վոստրիկանությունը դուրսը կորցնի և ավելի կառաղի: Յեւ դրա համար Նրիստոն առաջարկում էր դիշեքը նավթ լցնել վոստրիկանատան շենքի վրա և վառել: Պետկոն համաձայն չեր. գտնում էր, վոր դրանից կարող է քաղաքը հրդեհ ընկնել, և անմեղ մարդիկ կվնասվեն իրար:

Շատ առաջարկներ արին ընկերներն իրար, բայց բոլորն էլ անհամար գտան: Վերջում, յերբ արդեն հուսահատվել էին, Պետկոն վեր թռավ տեղից:

— Գտա՛:

— Ի՞նչ,— հետաքրքրվեց Նրիստոն:

— Հետևի՛ր, կիմանաս:

Ու ընկերները ճանապարհ ընկան դեպի քաղաքի այդ դիշեքը:

Բայց թե ինչ էր Պետկոյի գաղտնիքը—այդ սլաքովեց միայն հետևյալ ուրը—մայիսի մեկին:

3

Փոքր է Բրադա քաղաքը, բայց մեծ, ընդարձակ և նրա շուկան: Այնտեղ և հավաքվում ժողովուրդը տոներին, հանդեսներին. այնտեղ են խանութները. դրսից յեկած դուղաչիններն այնտեղ են ծախում իրենց կաթը, մածուիր, կանաչեղենն ու հափեղենը, դառը, վոչխարը, նույնիսկ տալարը: Այդ հրապարակի վրա յե գտնվում վոստրիկանության յերկհարկանի շենքը, վոր հսկող աչքի նման հետևում է շուկայի առևտրին ու շարժումին:

4

Մայիսի մեկի առավոտը վոստրիկանները սովորականից ավելի էին այտուեղ: Նրանք՝ աչքերը հորս՝ հրակում էին հրապարակին ու մյուս փողոցներին, վոր ցույց լինելու դեպքում—ցրեն, հարկ յեղած զեպքում

կրակեն: Դրա համար զինված էյին սովորականից ավելի:

Սուսիսը, ժամը տասին, յերբ շուկան լիքն եր արդեն մթերք ծախող գյուղացիներով և առևտրի յեղած քաղաքացիներով, Պետկոն ու Խրիստոն շուկա յեկան՝ մի փակ կողով ձեռներին: Տպավորությունն այն եր, թե յեկել են բան գնելու կամ վաճառելու: Դրանից եր, վոր մի ծերունի հարցրեց.

— Ձո՞ւ յեք ծախում:

— Չե՛, —ասին նրանք ու անցան առաջ, ուր խմբված էյին գյուղացիներն իրանց ապրանքով, արկղներով ու հավերով: Մտան նրանք բաղմության մեջ և կողավն դիտելով յամբ դրին գետնին:

— Հիմա ի՞նչ անենք, —հարցրեց Խրիստոն:

— Սո՛ւս, սպասի՛ր, —զգուշացրեց Պետկոն:

Յերկու վոստիկան՝ թուր ու ատրճանակ կապած և սուլիչը վզներինցը կախ, շրջում էյին շուկայում և հեռվից ուշադիր գնում ամեն մեկին ու նրա ապրանքը: Յերբ նրանք յեկան ու, սրա-նրա ապրանքը հոտոտելով, անցան ամեն մեկը շուկայի մի կողմը, —Պետկոն շինջաց Խրիստոյին.

— Բա՛ց թող...

Ուռե կողովի կախարիչը բացվեց և այնտեղից դուրս թռավ մի կարմիր բան և առևտրով զբաղված բաղմության միջից բարձրացավ վեր:

Ջարմանքի ձայներ լավեցին, իսկ վոստիկաններից մեկը, —ավելի մոտ գտնվողը, —ապչեց մի վայրկյան. կարմիրը նրան այնպես չփոթեց, վոր մի քանի քայլ յետ վաղեց. մեկ նրան թվաց, թե «փռուան» և (թղթից շինած այն խաղալիքը, վոր յերեխաները չարից կապած բաց են թողնում դեպի յերկինք), մեկ էլ կարծեց՝ ծալած կարմիր դրոշակ, —յերկու դեպքումն էլ կարմիր ու անթույլատրելի, —ուստի նա առաջ վաղեց, վոր բռնի, բայց վո՛րքան մեծ յեղավ զարմանքը, յերբ այդ թռչող

կարմիրը թևերը բաց ու խուփ արեց ու մի տարորինակ ձայն հանեց. «կըրլը՛կ»...

Կին, մարդ, յերեխա, առևտուրը թողած, նայեցին թռչող կարմրին, իսկ վոստիկանք բացականչելով, հետևեցին վոստիկանին: Մակայն վոստիկանը, չհասնելով թռչողին և միաժամանակ տեսնելով՝ ժողովուրդն իրար անցավ —այդ համարեց ցույցի նշան ու սուլեց.

— Շը՛շ...

Սուլոցի վրա վոստիկանատնից անմիջապես դուրս թափվեցին կաղմ ու սլառաստ վոստիկաններ և հետևեցին անկարգության վայրը, ուր բոլոր գյուղիներն արդեն նայում էյին վեր՝ ողում սավառնող կարմրին:

— Արագի՛լ և, արագի՛լ, —բացականչում էյին մարդիկ:

5

Իսկապես արագիլ եր: Նա թևատարած մի յերկու պտույտ գործեց շուկայի վերև, մի յերկու անգամ գլուխը թեքեց դեռ ու դեն, կարծես վորոշելու, թե ո՛ւր գնա, ու մեկ էլ թեքվեց, ուղիղ գնաց դեպի վոստիկանատուն և հանդարտ իջավ նրա աշտարակի գլխին, ժամացույցից վեր... Շուկայում ծիծաղ բարձրացավ: Իսկ յերբ նա, իրեն հանդիստ գդայով, վոստի մեկը ծալեց, դրեց վորի տակ —ծիծաղը փոխվեց քրքիջի:

Այդ՝ փոքրիկ քաղաքին, նաև վոստիկաններին ծանոթ արագին եր, վոր որիա մորոշ ժամերին սիրում եր թառել կա՛մ յեկեղեցու դմբեթին, կա՛մ վոստիկանատան դմբեթաման աշտարակի գլխին, այսինքն քաղաքի յերկու բարձր ետերին, ուր մարդկանցից հեռու հանդստանում եր նա՝ մտքերի մեջ խորասուզված:

Բայց ինչո՞ւ յեր կարմրե՛լ —այդ եր զարմանալին:

— Արյունոտված և, —ասում էյին մարդիկ:

— Յերեկի վիրափորված և:

— Ներկե՛լ են, ներկե՛լ, —բացականչեց մեկը հան-

կարծ:—Չէ՞ք տեսնում, մինչև անգամ գլուխն ու վոտ-
ները կարմիր են...

Առ սկսեցին փափաղ, թե ո՞վ կարող է ներկած լինել:

6

Պետկոն ու Նրիստոն, մարդկանց արանքը խցկված,
լսում եյին այդ փափոցները և հրճվում, վոր վոչ-վոր
գլխի չի ընկնում, թե իրենք են ներկել. վոչ-վոր չգիտի,
թե յերեկոյան ի՞նչ դժվարությամբ եյին բարձրացել
արագիլի բունը, ի՞նչ տանջանքով եյին իջեցրել նրան,
բերել տուն ու գիշերը, բոլորից ծածուկ, ներկել թա-
նաքով, ապա դրել մառանը, վոր առավոտը կողովի մեջ
վազած բերին չուկա:

Յեւ այժմ, յերբ արագիլը կարմիր գրոշակի պես
անկէլ էր վոստիկանատան գլխին—Պետկոն ու Նրիս-
տոն չեյին կարողանում իրենց դսպել. հպարտությամբ
նայում եյին նրան ու ժպտում վոստիկանների ճիգերի
վրա, վորոնք աշխատում եյին քարով, շարժումներով
ու սուլոցով քչել նրան աշտարակից:

Արագիլն անտարբեր նայում էր այդ բոլորին ու չէր
չարժվում: Վոստիկանները, ժողովրդի ծիծաղը տես-
նելով, կատաղում եյին, բայց կրակել չեյին համարձակ-
վում, վոր վոստիկանապետը չիմանա:

Սակայն ընդհանուր իրարանցումը, սուլոցն ու կան-
չերը հասան վերջապես նրան ել. և չուտով շեմքի վրա
յերեաց նրա խոշոր մարմինը՝ խոշոր բեղերով, պսպղուն
ուսադիրներով և թուրը կողքից կախ: Իմանալով բանի
եյությունը, նրա մոտ գեմքը կաս-կարմիր կտրեց:

— Բռնե՛լ թռչունը և հանցավորին գտնե՛լ,—կար-
գադրեց նա բարկացած:

Հաղիվ եյին վոստիկաններից յերկուսը բարձրացել
տանիքը,—արագիլը կարմիր թևերը թափ տվեց խսկույն
ու բարձրացավ վեր:

7

Վոստիկանները, պարապ մարդիկ, մանավանդ յե-
րեխաները, խմբերով վազեցին նրա ուղղությամբ: Իսկ
այդ բոլորի յետևից դանդաղ, իրեն անտարբեր հետա-
քըքըվողներ, գնացին Պետկոն ու Նրիստոն՝ դատարկ
կողովը ձեռներին:

Արագիլը, յերկար վոտները յերկու չոր ճիւղտի
պես յետևը մեկնած, ուղիղ դժով սավառնեց դեպի յե-
կեղեցին: Բայց, յեկեղեցու գլխին իջնելու փոխարեն,
պտույտներ գործեց նրա վերևը և, չգիտես ինչո՞ւ, վոչ-
մանեց ու նորից յետ դարձավ:

Նրա հետ և բաղմուքյունը, վորին այժմ բակերից
ու փողոցներից միացել եյին հասակավորների ու մա-
նուկների նոր խմբեր:

Յետ դառնալով՝ արագիլը մի քանի հանդարտ,
լա՛յն պտույտներ արավ քաղաքի, ավելի չուտ՝ բաղմու-
թյան զյխավերևը, կարծես ուզում էր իմանալ նրա
հուզմունքի պատճառը. ապա, յերբ ժողովուրդը յեկե-
ղեցու մոտից դեռ հրապարակ չէր հասել,—յեկավ, կրկին
իջավ իր սիրած տեղը՝ վոստիկանատան աշտարակին,
ժամացույցի վրա:

— Կրակե՛լ, կրակե՛լ,—հրամայեց այս անգամ
զայրույթով բռնկած պետը:

Միանգամից այլթեցին մի քանի տորճանակներ:

Արագիլը պոկվեց տեղից, նորից բարձրացավ վեր
ու թևերը լայն տարածած, սավառնակի պես պտույտ
տվեց մի քանի անգամ, հետո հանդարտ թևածելով,
ուղղվեց դեպի այգիները, ուր հնորյա բարդու ճղների
արանքում գտնվում էր նրա մեծ բունը:

Այս անգամ ժողովուրդը չհետևեց նրան. վոստի-
կանները նույնպես: Ապարդյուն բան էր՝ կտրել մոտ
յերկու կիլոմետր տարածություն: Միայն Պետկոն ու
Նրիստոն եյին, վոր ուրախ-ուրախ գնացին նրա յետևից,
այն ել վոչ թե այգիները, այլ իրենց տները: Նրանք այն-

41/28-87



քան ուրախ ելին, կարծես մեծ հաղթանակից ելին դառ-
նում տուն:

8

Կարծում եք արագիլի պատմութիւնը սրանով վեր-
ջացա՞ւ:—Վոչ:

Այնուհետեւ մի ամբողջ շարաթ, և ավելի, նա, կար-
միր թեւերը դրոշի պէս պարզած, հաճախ սափառնում եր
քաղաքի գլխին ու մեկ-մեկ իջնում կա՛մ յեկեղեցու դռ-
բեթին, կա՛մ վոստիկանատան աշտարակին, — յերկու
բարձր կետերի, վորոնք իշխում են Բրազայի վրա:

Նրա թեւերը կարմիր մնացին այնքան, մինչև վոր
անձրևները լվացին նրանց:

Բայց մինչև այսօր ել Բրազայում չդիտեն, թե ո՛վ
եր ներկել նրան:

Այդ բանը դիտեն միայն իրենք—Պետկոն ու Խրիս-
տոն:

ՓՈՔՐԻԿ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ

Խարտյաչ մազերո՛վ տղա, լճակ աչերո՛վ տղա,
Յուրտ ե, հազում ես անկերջ, թշվա՛ռ, կմեռնես հազեդ:
Տոկուն, համարձակ տղա, յեռուն փողոցի՛ տղա,
Վազի՛ր ու կանչի՛ր ուժգին—Նոր լուր, հեռազիր, գա-
զե՛ թ:

Բորիկ վոսներո՛վ տղա, առույգ, կիսամե՛րկ տղա,
Մրազ անցնում ես մայթեն, մայթը թնդում ե վազեդ:
Հպարտ, աշխատո՛ղ տղա, մրի, զրկանքի՛ տղա,
Կանչի՛ր, անցորդին կանչի՛ր—Նոր լուր, հեռազիր,
գազե՛ թ:

Փոքրիկ, տաս տարու տղա, ըմբոստ, մաքառո՛ղ տղա,
Հոսում ե քրտինք ճակտեդ, ալտեդ ու փոշոտ մազեդ:
Փողոցը քնո՛ղ տղա, անկյուն կուչ յեկա՛ծ տղա,
Կանչի՛ր, քնիդ մեջ կանչի՛ր—Յուրտ ե, մրսում եմ,
գազե՛ թ:

ԴՈՒ ԻՄ ՓՈՔՐԻԿ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ

Դու իմ փոքրիկ հոկտեմբերի՛կ, ժպտուն ծաղիկ հոկտեմբերի,
Վառ աչքերով, սեպանդուր, թոթովախոս ու ժիր-մանչուկ,
Մեր աշխարհումն աճում ես դու, ինչպես աճն ե մեր տեմպերի,
Յեվ կյանքը նոր ու բարախող դուրգուրանքով քեզ ե կանչում:

Մեր աշխարհում լայն ու լուսեղ, ուր կա կոխվ ու հաղթանակ,
Մենք քեզ սիրով կգուրգուրենք, վոր ամբանաս դու և աճես,
Վոր դառնաս դու միլիոնաթիվ համառ ու պինդ մի նոր բանակ,
Վոր տարերքի և դիտության կուռ ամբոցները նվաճես:

Դու իմ փոքրիկ հոկտեմբերի՛կ, ժպտուն ծաղիկ հոկտեմբերի,
Սիրված թոռնիկ Լենին պապի, դու իմ ընկե՛ր՝ պստիկ, խնդուն,
Կմեծանաս ու կամբանաս վերելքներում նոր տեմպերի
Ու կդառնաս խիղախ մարտիկ՝ աշխատանքի մեր մեծ գնդում:


ԼԱՌ-ՀՈ

Փոքրիկ Լաո-Հոն ու չադրությամբ լսում եր իր հոր
և նրա ընկերների տաք վիճաբանութիւնը:

Հայրը նրան պատվիրել եր, վոր գնա բակը և խաղա
ընկերների հետ ու վստահ եր, վոր գնացել ե ու իրանց
չի լսում: Բայց Լաո-Հոն չեր գնացել, թաք եր կացել մի
անկյունում և լսում եր հոր և ընկերների գրույցը:

Լաո-Հոյի հայրը և նրա ընկերները չլմացի բանվոր-
ներ ելին, վորոնք աշխատում եյին Չինաստանում գտնը-
ված անդլիական ածխի հանքերում:

Փոքրիկ Լաո-Հոն շատ անգամ եր տեսել, թե ինչպես
անդլիացի վերակացուն մտրակով ծեծում եր իր հորը և
նրա ընկերներին: Լաո-Հոյի հայրը հայհոյում և անի-



ծում եր անդլիացիներին, վորովհետև նրանք եյին պատ-
ճառը, վոր իր քույրերն ու յեղրայրները կարօտ են
մնում նույնիսկ խաչած բրնձի:

Լաո-Հոն չատ եր վախենում անգլիացիներից, բայց
և միաժամանակ ատամներն եր կրճըտացնում, յերբ
տեսնում եր նրանց:

Այժմ իր հայրը և նրա ընկերները պատմում եյին
անգլիացիների մասին, նրանք խոսում եյին դործադու-
լի մասին: Ահա մի քանի որ ե, վոր Լաո-Հոյի հայրը
ածխահանք չի դնում: Չեն գնացել նաև իր ընկերները:

— Ուրեմն դործադուլն այդ ե, — մտածեց Լաո-Հոն:

Բանվորների դուռթյունն ավելի վատացավ. խաչած
բրնձ վոչ միայն չեյին ճարում, այլև բոլորովին չկար:
Լաո-Հոն ամբողջ մարմնով դողում եր, յերբ խոսում եյին
կռվի և վոստիկանների մասին. սակայն յերբ լսեց, վոր
կռվի ազդանշանը պիտի տրվի իրենց տանից, ուրախա-
ցավ:

— Մեզնից կարմիր դրոշակը կբարձրացնի նա, ով
վոր ընտանիքի տեք չե, — առաջարկեցին բանվորները:

Բոլորն ել դուռները կախեցին: Բոլորն ել ընտանիք
ունեյին:

Լաո-Հոն չեր հասկանում, թե ինչո՞ւ եյին վիճում
այդ մասին: Չե՞ վոր դրանից ավելի հեշտ բան չկա: Ի՞նչ
դժվար բան ե դրոշակ կախելը: Նա նույնիսկ ծիծաղեց
մեծ-մեծ բանվորների վրա, վորոնք վիճում եյին այդ
մասին: Նրա աչքերի կրակն ավելի բոցավառվեց, նա
սկսեց մտածել այդ մասին: Նա գիտեր, վոր կարմիր
դրոշակը կլինի այն դրոշակը, վոր պահապանումն ե
դրված, իրենց տանը: Այդ դրոշակը ծանր չե: Ուրեմն
վե՞ր ծանրության համար չե: Փոքրիկն անգամ կարող ե
վերցնել:

Վիճարանությունը շարունակվեց: Լաո-Հոյի հա-
մար պարզվեց, վոր դրոշակն առաջին անգամ բարձա-
նոցը կլինի վոստիկանական գնդակի առաջին դոհը: Ամեն
մի բանվոր պնդում եր, վոր ինքը բարձրացնի դրոշակը,

բայց յուրաքանչյուր բանվորի առաջարկը մերժվում էր մյուսների կողմից, նկատի առնելով յուրաքանչյուրի ընտանեկան դրուժյունը:

Խոսեց Լաո-Հոյի հայրը:

Լաո-Հոն դարձավ ամբողջապես ուշադրություն:

Հայրը սկսեց մուսյլ, ծանր, բայց հաստատուն յեղանակով.

— Իմ պարտականությունն է, վոր յե՛ս բարձրացնեմ գրոշակը, չե՞ վոր գրոշակը պիտի բարձրանա ի՛մ կտուրի վրա:

Այդ առաջարկը մերժվեց: Բայց հայրը մի կերպ լռեցնելով ընկերներին՝ շարունակեց.

— Թո՛ւյլ տվե՛ք՝ կատարեմ իմ դատարկաբային պարտքը: Անպայման յե՛ս, ընկերներ՛ր, անպայման...

Լաո-Հոն ուզեց ճշալ. բայց մի կերպ զսպեց իրեն: Դրսում լավեցին աղաղակներ: Հայրը վազեց դուրս, իսկ ընկերները՝ դեպի նեղլիկ յուսամուտը: Քիչ անց ներս ընկավ հայրը և հայտարարեց.

— Վոստիկանները լցվել են բանվորական թաղը:

— Պետք է բարձրացնել գրոշակը, — աղաղակեց բանվորներից մեկը:

Հասավ վճռական րոպեն:

Տիրեց քար լուռթյուն: Վոչ վոք չեւ համարձակվում խզել լուռթյունը:

Լաո-Հոյի հայրը ասաց վերջապես.

— Պետք է բարձրացնել գրոշակը: — Յեւ անմիջապես վազեց դեպի պահարանը: Նայեց ամեն տեղ:

Դրոշակը չկար:

— Ո՞վ է վերցրել գրոշակը, — ջղախորեն բղավեց Լաո-Հոյի հայրը:

Վոչ մի պատասխան:

Հանկարծ լավեց հրացանների վոբոս:

Դրսում կռիվն սկսել էր գործադուլավոր բանվորների և վոստիկանության միջև:

— Բանվորները կռվում են առանց ազդանշանի, —

ցատումով կանչեց Լաո-Հոյի հայրը: — Դուք ինձ չթողիք, ընկերներ՛ր. այս ի՞նչ բան է: Մեզ մնում է շտապել դեպի կռիվ:

Բոլորն ել շարժվեցին:

Հանկարծ դրսից լավեց Լաո-Հոյի մոր լացն ու կոծը: Նա ներս ընկավ՝ Լաո-Հոյին գրկած:

Լաո-Հոյի ճակատից հոսում էր կարմիր արյունը: Նա ձեռքում բռնել էր կարմիր դրոշակը:

Նա դեռ վողջ էր:

Հայրը գրկեց նրան:

— Լաո-Հո՛ւ, ի՞նչ պատահեց քեզ...

— Կտուրի վրա կարմիր դրոշակ բարձրացնելիս՝ խփեցին ինձ, — պատասխանեց փոքրիկ հերոսը և փակեց աչքերն ընդմիջա:

Հայրը համբուրեց նրա արյունոտ ճակատը, դրեց մոր գիրկը և արյունով ներկված շրթունքներով շտապեց դեպի փողոց:

ԿՈՄՈՒՆԱՆ

Կոմունան ընկել է,
Կեցցե՛ Կոմունան,
Ձեր գործը, ընկերներ՛ր,
Անմեռ կմնա:

Ահա դրոշմ ձեր՝
Մեր ուսերի վրա,
Հանդիստ դուք ննջեցե՛ք,
Մենք գնում ենք առաջ:

Մեզ չի սարսի կյանքում
Թշնամական քամին,
Իր մահերդն է յերգում
Չառամ մեր թշնամին:

Ձեր գործը, ընկերներ՛ր,
Անմեռ կմնա:
Կոմունան ընկել է,
Կեցցե՛ կոմունան:

ՊԱՏՄԱՎԱԾՔԻ ՏՐԱՄՎԱՅԻ ՄԱՍԻՆ

1

Քաղաքը՝ մեծ, ու փողոցները ձգված են բազմաթիվ ուղղութիւններով: Տեղ-տեղ հրապարակներ և ամեն տեղ՝ պրոսպեկտներ ու փողոցներ: Մեծ ու փոքր փողոցներ, մեծ ու փոքր շենքեր և նեղ ու լայն փողոցներ: Նաև յերկար պրոսպեկտներ, նաև լայնաբձակ հրապարակներ...

Յեւ այդ բոլորին իրար հետ կապել և յերկաթընթաց տրամվայը:

Նա փոխել է հեռվի ու մոտիկի գաղափարը, և հեռուն մոտ է թվում, իսկ մոտը՝ հեռու: Մոտ է ծայրամասում գտնվող տնակը, վորովհետև նրա կողքից, յուրաքանչյուր հինգ րոպեն միանգամ, տրամվայն է անցնում: Իսկ մոտակայքում գտնվող փողոցներից մեկը հեռու չէ, վորովհետև նրա միջով յերկաթե դժեր չեն անցնում, տրամվայ չի անցնում:

Նա փոխել է հեռվի ու մոտիկի գաղափարը, նաև մենակության ու խմբվածության գաղափարը: Հեռու բլրի վրա մենավոր տնակը մենակ չէ, վորովհետև նրա բնակիչները մի քանի րոպեյում կարող են հասնել քաղաքի ցանկացած մասը: Յեւ նրանց թվում է, վոր իրենք ապրում են քաղաքի ցանկացած մասում և վոչ թե հեռավոր բլուրի վրա:

Յեւ այսպես, անցնելով իրենց յերկաթե ճանապարհներով՝ տրամվայի վագոններն իրար են կապել ծայրամասերն ու կենտրոնները: Նրանք փոխել են հեռվի ու մո-

տիկի հասկացողութիւնը և նրանք փոխել են մենակության ու խմբվածության հասկացողութիւնը...
Այդ նա յե, —տրամվայը...

2

Փոքրիկ քաղաքը, ուր տրամվայ չկա, ունի կենտրոնական մաս՝ լավ փողոցներով, ու ծայրամասեր՝ վատ փողոցներով: Նրանց տարբերութիւնը մեծ է: Մի տեղում լույս է, և մութ է մյուս տեղում: Մի տեղում լայն է, և նեղ է մյուս տեղում: Շենքերի տարբերութիւն կա, բնակիչների տարբերութիւն կա և ելի շատ բան:

Տրամվայն այդ բոլորը ջնջել է: Փոքր և տարբերութիւնը կենտրոնի ու ծայրամասերի մեջ: Լայն փողոցները ձգվում են մինչև քաղաքի ծայրերը, լույսերը քիչ են նվազում այդ ծայրերում. շենքերի տարբերութիւնը փոքր է, նաև բնակիչներին:

Տրամվայը ջնջել է կենտրոնի ու ծայրամասի հասկացողութիւնը, նաև նրանց սահմանները: Այդ ջնջված սահմանները խաչաձևելով՝ տրամվայի վագոններն անցնում են ամեն կողմ: Իրենց յերկաթե ճանապարհն անցնում է ծայրամասերով ու կենտրոններով, կենտրոններով ու ծայրամասերով...

Մոտ է այն հրապարակը, մոտ է այս հրապարակը, մոտ են և՛ փողոցները, և՛ կլինոները, և՛ թատրոնները, և՛ հիմնարկները...

Այդ նա յե, —տրամվայը:

3

Բազմաթիվ փողոցներով ավտոներն են անցնում և բեռնատար ավտոմոբիլները, կառքերն են անցնում և ֆուրգոնները: Անցնում են մարդիկ:

Յեւ նորից մարդիկ են անցնում, ավտոներն ու ավտոբուսները, կառքերն ու բեռնատար ավտոմոբիլները...

Նրանցից մեկն աջ է թեքվում, մյուսը՝ ձախ, մի ուրիշն ուղղաձիգ սլանում է, և գալիս է չորրորդը: Ավտոն աջ թեքվեց, բայց նա կարող էր ձախ թեքվել: Կառքըն ուղղաձիգ անցավ, բայց դեպի աջ կզնար, յեթե ուզենար:

Միայն տրամվայն է, վոր անցնում է իր համար սահմանված ճանապարհներով և ուրիշ կողմ չի թեքվում յերբեք: Նրա վագոններն իրենց ընթացքն ունեն և գնում են այդ ընթացքով:

Ու սիրելի յեն այն որենքները, յերկաթե այն ռելսերը, վորոնցով սահմանվել է վագոնների ընթացքը: Մարդը նստել է տրամվայ և հաճույքով է յենթարկվում իր իսկ ձեռքով կառուցած տրամվայի ընթացքին և այն որենքին, վոր ինքն է սահմանել իրեն համար: Յեվ նա ժպտում է, վոր հյուս յերկաթն ու զսպված ելեկտրոն հնազանդ են սահմանված որենքին, և մի վագոնն աջ է գնում, մյուսը՝ ձախ, այն մյուսն—ուղղաձիգ, չորրորդըն այս կողմ է գալիս: Այդ՝ մարդու որենքն է, վոր կարգ է մտցրել վոչ միայն վագոնների, այլև իր ընթացքի մեջ:

Գնում է վագոնը, սլանում է, դանդաղ է գնում մի քիչ, ապա նորից: Յեվ այն անկյունում նա կանգնում է: Նորից է գնում և կանգնում է այնտեղ, իսկ այնտեղից նա թեքվում է այն կողմ, անպայման ա'յն կողմ և վոչ թե ա'յս...

Յերկաթե սյուներն իրենց թևերով ելեկտրալարերն են պահել: Վագոնի աղեղը քսվում է լարին և վագոնը գնում է: Լսվում է անխիստ խռպոցն ու շվոցը ռելսերի վրա և ապա զնոց՝ վագոնի ներսից: Վատմանը կանգնեցնում է վագոնը:

Այդ նա յե,— տրամվայը:

4

Յերեկո:

Յեվ այն, վոր փողոցներն են, և այն, վոր շատ լուսավոր են ու քիչ լուսավոր, և այն, վոր շատ զեղեցիկ են

ու քիչ զեղեցիկ,—այդ բոլորն այժմ մի պահորամ է տրամվայի լուսամուտից: Յե'վ կամուրջը, և' լուսազարդ փտրինը, և' այն փողոցը, վոր անցավ:

Մթան մեջ լույսեր են պլպլում. հեռավոր փողոցներ են այդ: Մթում լույսեր են չողչողում. դրանք ել հեռավոր փողոցներ են:

Վագոնի աղեղն ելեկտրալարին է քսվում, և վագոնը գնում է: Տեղ-տեղ թույլ ճայթում է, և կապույտ կայծն է առկայծում աղեղի և լարի միջև, իսկ վագոնի մեջ մարդիկ են, և զեղնավուն ելեկտրական լույսն է:

Խռպում է ու շվացնում, կապույտ առկայծում է և թույլ ճայթում, լույսեր ու չողեր են, շատ լուսավոր ու քիչ լուսավոր փողոցներ, և յերկաթի վրայով՝ ճանապարհն է:

Այդ նա յե,—տրամվայը:

5

Վատմանը ձեռնոցները հանեց: Ամեն կողմից յեկեչ են վագոնները և հավաքվել են տրամվայի պարկում:

Վաղը—վաղ առավոտյան, նրանք նորից դուրս կգան, և վաղ առավոտից մինչև ուշ գիշեր փողոցներով կանցնի կգա, կգնա, կչարժվի ու քաղաքը շարժման մեջ կդնի նա'—տրամվայը...

ԱՌԱՎՈՏԸ

Նորից արևն յելավ, նորից վառեց կրակ, նորից հնչեց ուրախ պիտներական թմբուկ. նորից բացվեց ուրախ մեր սարերի վրա—խորհրդային ազատ առավոտը խնդուն:

Մեր գործատան դռան հաղար ուրախ աչքեր,
հաղար ուրախ դեմքեր բանվոր ընկերների,
—մենք պատրաստ ենք, յեկանք, յերբ սուրիչը կանչեց,
յերբ արևը բացվեց աղատ մեր լեռներին:

Նորից վառ—վառ աչքեր, նորից հայացքներ տաք,
նորից կաշվե բաճկոն, նորից մաշված կեպի,
առավոտվա պես վառ ու արևից ել բարկ—
այդ մեր բանալին ե կուռ, պատրաստ աշխատանքի:—

— Զա՛ն, մեր բանակը կուռ, մեր կրծքերը յերկաթ,
բետոնի նպաստ ուր մեր բանակը գրանիտ,
չա՛ն, մեր ձեռները կոշտ, մեր ճակատը հպարտ—
ընկճել չի կարող և վոչ մի թշնամի:

Նորից արևն յելալ, նորից վառեց կրակ,
նորից հնչեց ուրախ պիտոներական թմբուկ.
նորից բացվեց ուրախ մեր սարերի վրա—
խորհրդային աղատ առավոտը խնդուն:

ԱԼԻԿՆ ՈՒ ԼԱԼԻԿԸ

Մեր կարմրաթուշ Ալիկը
Յեվ սիրունիկ Լալիկը
Ընկերներ են միասիրտ,
նաղ են անում միասին:

Ալիկ, Լալիկ, Ալիկ, Լալիկ,
Այնքա՛ն սիրուն, այնքա՛ն լավիկ,
Ինչպես ջրի զուլալ ալիք:

Յերբ ձմեռը հեռացալ,
Ցուրտ ու բուքը վերացալ,
Պարտեզ գնաց Լալիկը,
Այնտեղ եր և Ալիկը:

Ալիկ, Լալիկ, Ալիկ, Լալիկ,
Այնքա՛ն սիրուն, այնքա՛ն լավիկ,
Ինչպես ջրի յերկու ալիք:

— Ալի՛կ,—ասաց Լալիկը,—
Հայեց սառած ալիքը,
Տե՛ս՝ արևը տաք ե, տաք,
եւ չի սառի ամալի տակ:

Տե՛ս՝ առուն եւ մաքրաջուր
Ի՛նչ անուշ ե խոխոջում,
Ենքան զուլալ ու պարզ ե,
Վոր տեսնում ես ավաղը:

— Լալի՛կ,—ասաց Ալիկը,
Տե՛ս—սիրուն այս ծաղիկը՝
Զյունի նման սպիտակ,
Պահ եր մտել ձյունի տակ:

Լսի՛ր՝ ինչքա՛ն հնչյուն կա,
Ինչքա՛ն փոքրիկ թռչուն կա,
Ինչքա՛ն ծաղիկ, ինչքա՛ն ծառ,
Ի՛նչ լալ գարուն ե պայծառ:

Ալիկ, Լալիկ միասին,
Ուրախացան միասիրտ,
Իրար ձեռքից բռնեցին,
Անուշ—անուշ յերգեցին:

Այիկ, Լալիկ, Ալիկ, Լալիկ,
 Այնքա՛ն սիրուն, այնքա՛ն շավիկ,
 Մեր արեւոյ վառ, պսպղուն,
 Զինջ առվի յերկու ալիք:

ՀԻՊՐՈՒՍԱՅԱՆ ԿԱՌՈՒՅՈՂՆԵՐԸ

1


— Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ,
 ումբերը թնդում են,
 թումբերը քանդում են,
 ճամբեդ հարթում ենք, արի՛:

Խոր-խոր անդնդումն ենք,
 սրտով բայց խնդուն ենք,
 ժայռերը քանդում ենք, արի՛:

2

Խոր-խոր անդնդումն այդ,
 յերբ ումբը թնդում եր,
 յերբ ժայռը քանդվում եր,—
 ընկավ ընկերըս արի՛:

Ժայռի տակ մեռավ նա,
 կանդ հառավ յեռանդր,
 Լրկին քանդեցինք, արի՛:



Տնե՛րը, տնե՛րը,
Կոնդի հին տները,
անլույս, կույր տները—
նայում են դեմի դարից:

Նավթը հատել ե,
լամպը մարել ե,
մութը պատել ե, արի:

4

— Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ,
ծափ ու խնդում ե,
ձորը թնդում ե,
սրտով լենդուն ենք, արի':

Յերգը թնդում ե,
յերթը խնդուն ե,
կյանքը ժպտում ե, արի':

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Նա տուն եր գալիս Կարմիր բանակից:
Յն բատրակ աղեն—անունն Ալեքսան:
Գրքերով լեցուն մի պարկ չալակին
ու դռին կարմիր աստղաձև նշան:
Մի անծայրածիր աչնան յերեկո
փովել եր անափ դաշտերի վրա:
Յել Ալեքսանի սիրտը թե առած

ուղում եր թուչել մաշինի հեքով
ու տուն սլանալ իրենից առնջ:
Նա քանի դնում, մոտենում եր տան:
Անցնում եր ծանոթ արտերի մոտով,
լցվում եր ենքան անհուն կարոտով,
սիրտն անհամբեր զարկում եր ենքան:
Կարմիր բանակից նա գալիս եր տուն,
խորունկ մտքերով վառված են աղեն,
սրտում յերկու բոց, յերկու վառ յերդում,
չուրջը—յերեկո, մշուշ վոսկեղեն:
Յերգվեց յերեկ:
Բանակում հանդես ու միտինգ արին:
— Յես խոսք եմ տալիս կյանքս նվիրել
ընկեր Լենինի մեծ դադափարին:
Յել նրա քարե վեհ արձանի դեմ,
Լենինյան կարմիր դրոշմ ներքո
նրանք յերգվեցին՝ կովել, աշխատել
կոլեկտիվ սրտով—կոլեկտիվ ձեռքով...

ՀՈՒՆՁԸ

Ծույլ ե հնձում գերանդին,
Յե՛կ, հունձ անող մեքենա:
Հունձը հանդում կմնա,
Ծույլ ե հնձում գերանդին:
Յեո ու յեռանդ բե՛ր հանդին,
Հունձդ հնձի՛ր ու գնա՛,
Ծույլ ե հնձում գերանդին,
Յե՛կ, հունձ անող մեքենա:

Յնծում ե հովիտը:

Այսօր հաղթութեան տուն է:

Վոսկեձորի բոլոր գյուղերէն, քաղաքից, ամեն կողմից ելերով, ձիերով, ջորիներով գալիս են ու գալիս:

Բոլորն շտապում են դեպի Թումայի ձորը:

Ամեն մեկն աշխատում է մոտ կանգնել դրոշակներով զարդարված պատվանդանին, վորի վրա ծաղիկների մեջ դրված է Լենինի կիսանդրին: Ձլում ե գունան, դրմբում ե թմբուկը և արձագանքում ե ձորը:

Մի տեղ յայլի յեն բռնել. մի ուրիշ տեղ չըջալատել են գոտեմարտողներին, վոմանք ոջախ են արել. ծուխը բարձրանում ե, կաթսաների մեջ խլթխլթում ե խաչաման:

Սա վոչ աստվածածնի և վոչ ել սուրբ Սարգսի տուն ե:

Սա հաղթութեան տուն ե:

Հաղթական կամարը զարդարված ե ծաղիկներով ու գալար ճյուղերով:

Ողջ թնդում ե հարյուրավոր մարդկանց գոռում-գոչումով: Տարիներով չոր ու ցամաք ձորն այսօր պետք ե հեղեղվի և ցածումն րնկած հսկայական, ճաքճաքած հողը պիտի ծծի կենսատու հեղուկը:

Հանկարծ հեռվում յայեց մի խուլ աղմուկ: Ձորի գլխին յերեւացին մի քանի հոգի: Նրանք ձորն ելին իջնում, և նրանց առաջանալու հետ միասին ուժեղանում ե յին ուրախութեան աղաղակները: Ահա և բանվորները միացան իջնող խմբին. ելի միացան, ու խուռն բազմութունը ձեռների վրա րեքեց ճարտարապետ Ղամբարյանին ու վարպետ Ոհանին: Ներքում իրար անցան. ծովի պես որորվեց սմբոխը և գրոհ տվեց դեպի ձորը:

Թնդացին չրջակա յեռները:

Վարպետ Ոհանն ուզեց խոսել, բայց հուզմունքից

վոչինչ չկարողացավ ասել և գրկելով ինժեներ Ղամբարյանին՝ մնաց մի պահ և ապա հուզված ձայնով ասաց.

— Ընկերներ, առանց խորհրդային իշխանութեան, մենք բոլորս միասին անկարող կլինեյինք այսքան դժվարություններ հաղթահարել: Բուրժուական աշխարհում հողն ու ջուրը մերը չէր, այլ աղա Վոսկաններին: Մենք հաղթեցինք խորհրդային իշխանութեան ղեկավարութեամբ. նա բաց արեց մեր առաջ գիտութեան ճանապարհը:

Կեցցե՛ խորհրդային իշխանությունը:

Կեցցե՛ գիտությունը:—

Վարպետ Ոհանի ձայնը խլացավ ծափերի, ուրախ բացականչությունների ու յերաժշտութեան նվագի հնչյունների մեջ:

Խոսեցին մի շարք բանվորներ ու քաղաքից յեկած հյուրերը:

Ժամը 4 անց 15 րոպե, ողի մեջ սլացավ հրթիռը և պայթեց:

Յերաժշտությունը լռեց:

— Բանալ չյուզները, — ելեկտրակայանի հեռախոսի միջից լսվեց ճարտարապետ Ղամբարյանի հուզումնալից, բայց ինքնավստահ ձայնը:

— Բանալ չյուզները...

— Բանալ չյուզները... Բանալ... ձայն տվին իրար չյուզների մոտ կանգնած բանվորները:

Հարյուրավոր մարդիկ շունչները պահած, լուռ, սրտատրոփ սպասում են: Նրանք յսում են իրենց սրտերի դարկը... բոլորի հայացքները հառած են ձորին, լարված ուշադրութեամբ, գլուխները վեր, ամեն ինչ մոռացած՝ սպասում են: Ամեն մեկն աշխատում ե առաջինն ինքը տեսնի...

— Կամա՛ց, վոտս...

— Սո՛ւս...

Մի երեխա սկսեց ջալ:

— Ձենդ կտրի՛ր, — ձայն տվին այս ու այն կողմից:

— Լսեցի՞ր...
— Ձենդ կտրի՞ր:
— Սպասի՞ր, սպասի՞ր...
Մեկը բարձրաձայն ճչաց.

— Գե՛տը: Ձո՛ւրը:

Յեւ իսկապես, ձորի գլխից, ինչպես վանդակից
դուրս անձած առյուծ, պղտոր, փրփրադեղ առաջին ա-
լիքն իրեն ցած նետեց և փշուր փշուր յեղավ: Առաջին
ալիքին հետեւեց յերկրորդ, յերրորդը, և լայնաբերան
ջրվեժն անընդհատ հոսանքով զարկեց ձորի կարծր հա-
տակին, առաջ անցավ փրփրադեղ ու կասաղի, և ջրի փո-
շու մեջ փայլեց ծիածանը:

Յնծության աղաղակները խլացրին յերաժշտության
ձայնը:

«ՀԱՐՅԱՎ ՎՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈ»

Մեր տերտերը հաստափոր—
վոսկի ուներ մի սափոր:
Չարմանալու ի՞նչ կա վոր,
յեկամուտ կար ամեն որ:

Բայց մի ձախորդ, չար տարի
փոխվեց կարգը աշխարհի:—
Մարդիկ աստված ատեցին,
հարուստներին դատեցին:

Մեր տերտերը սուգ մտավ,
եւ հանդիստ քուն չգտավ:
Միտք եր անում ինքն իրեն.
— ունեցածիս կտիրեն:

Եդ անհավատ չները
կողոպտեցին տները:
Մի որ տունըս կմտնեն,

տուփով վոսկիս կդտնեն:
Քանի ուշ չե՝ ճար անենք,
թե չե ձեռքից կհանենք:

Ու շուտ գտավ նա ճարը,
վոսկին տարավ տաճարը,
դրեց բեմի մեջտեղը,
տափին մեխեց թիթեղը
յեւ թիթեղին գրեց դո՛հ:
«Աստ ե մարմինն Աստուծո»:

Բայց խորամանկ ժամկոչը
հասկանալով տիրոջը՝
հանեց տուփի փողերը,
փոխեց դրած տողերը.
«Մարմինն տյառն աստ վոչ գո»,
հարյավ վորդին Աստուծո»:

Վոր ժամկոչը մեծ գող ե՝
գեթ ինձ համար պարզ ե սա.
Գողը գողից գողացավ,
մեղքը ո՞ւմն ե, դո՛ւ ասա:
Բայց թե տերտերն իմանա,
չեմ կարծում թե դիմանա:

ՇՁՈՒԿԱՐ ՊԱՊԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Յես ծնվել եմ ձմռան խիստ ցրտերին, յերբ վոչ մի-
այն հավը խմելու ջուր չէր ճարում, այլ նույնիսկ, ինչ-
պես մայրս եր ասում, ծտերը սառչում էյին ողում: Ինձ
տարել են հարեան գյուղը մկրտելու. բայց իմ բախտից
թե տերտերը, թե տիրացուն հարբած են յեղել: Թասի
մեջ լցրել են յեռման ջուր ու չեն փորձել... վերցնում ե

ինձ հարբած տերտերն ու գլխի վայր իջեցնում ջրի մեջ... գլխին կաշին պլոկվում եւ Յավից գոռում եմ, ճշում ու շատ գոռալուց ուրիշ հիվանդութիւնն ել եմ ստանում: Սրանով հարցը չի փակվում. մինչև ութ տարին ինձ չներն եյին գզգզում, սազերն եյին կտցահարում, իսկ մի անգամ քուռակն այնպես ե քացի տվել, վոր ուշաթափ վեր եմ ընկել:

Ինը տարեկան եյի, վոր յես մի ուրիշ փորձանքի մեջ ընկա. ձկան պես բռնվեցի...

Մեզ մոտ դյուղում մի շատ ծեր ձկնորս կար. ձմեռը թռչուններ եր վորսում, իսկ ամառն ամբողջ օրը գետի ափին եր անցկացնում՝ կարթերը ձեռքին: Գետը խոր եր. գետի վրա ջրադաց եր շինած. բանդի տակին շատ ձուկ կար, վոր բռնում եր ծերունին, թե վորդով, թե խմորով: Շարում եր ափին վեց-յոթ կարթ ու սպասում:

Մի խումբ յերեսաներ սովորել եյինք կրծել ու պոկել ծերուկի կարթերի վրայից կեռերը: Պապիկը խուլ եր, քարի պես մունջ... հավաքվում եյինք գետափ, պահվում թիւրերի մեջ: Մեզնից մեկն ու մեկն իջնում ե ջուրը, կամաց առաջ չողում, մոտենում ծայրի կարթին, ասամներով կծում, կտրում ե կեռն ու յետ լողում, թփերի մեջ ահւսում: Պապը քաշում ե կարթն ու դարմանում. «եյի կծել են անպիտանները»: Ու հայհոյում ե ազահ ձկներին: Իսկ ձեռք բերած կեռերը փոխում ենք, ծախում, իրար պահ տալիս: Յես մի քանի կեռեր եյի ճարել, ուզում եյի ելի մեկը ձեռք բերել: Հենց վոր պապիկը կարթը ջուրը գցեց՝ մոտեցա, բռնեցի թեյն ու կարթը բերանս առա. մեկ ել պապը չքաշի՝ կարթը թափով: Թելը ձգվեց ձեռքումս ու կեռը խրվեց վերեւի շրթունքիս մեջ: Յես գոռալ սկսեցի, իսկ ջուրը բերանս ե լցվում: Պապը քաշում ե կարթը, ուզում ե ձուկը դուրս հանել: Սարսափելի ցավից ծամովում եմ, վորսներս թափահարում. ել չհամբերեցի, դուրս յեկա ջրից ու սկսեցի գոռալ: Պապը վախեցավ, շփեց, կարթը ձեռքից ցած ընկավ: Վախից ասամներն իրար ե խփում: Ախր ի՞նչպես չվախենար. ուզում եր ձուկ հանել, դուրս

յեկավ մի տղա: Մեկ ել թողեց ու փախավ, վազում ե, տրեխները վտանքից ընկնում են, ինքը գեռ փախչում ե:

Կեռը շրթունքիս տուն գնացի: Հայրս կեռը կտրեց, հանեց, բայց ինձ ել լավ տրորեց: Ու այսպես շրթունքս կպավ, բայց վերքի հետքերն ու ցավը սրտումս մնացին:

Մյուս տարի գարնանը սազեր եյի արածացնում: Գամաղացի թեւերը պտտվում են, սազերն արածում են, իսկ նրանց գլխին բազեն ե պտտում: Թմբկիկ, գեղին սագիկները վրայից բազեն աչք չի հեռացնում, բայց յես ել անուշադիր չեմ, քշում եմ, կանչում: Գալիս են ընկերներս, սկսում ենք քամաղացի թեւերից կախ ընկնել, պտտվել: Կախ ենք ընկնում, բարձրանում գետնից, մեկ յերկու, ապա պոկ գալիս ու պառկում, թե չե՝ մյուս թեւը կկպչի ու քաշ կտա: Բայց տղաների միտքն ուրիշ ե. մրցում են՝ ով վոր ամելի կբարձրանա, նա «տանուտեր» ե դառնում, իրավունք ե ստանում հեծնել մյուսներին, ման դալ:

Իմ մտքով ել անցավ «տանուտեր» դառնալ: Ու մոռացա սազերիս. կպա քամաղացի թեւերին, վերե բարձրացա: Մեկ ել աչքս ընկավ սազերին. բազեն մոտեցել ե, ահա կբռնի սագիկին:

Վախեցա, գոռում եմ. — «Տղե՛րք, բազե՛ն, քշեցեք բագեյին»: Իսկ մինչ այդ քամաղացի թեւն ինձ բարձրացրել ե վերե՛ւ. սարսափում եյի ներքե նայել: Մինչև յես իմ գլխի ճարն եյի անում, թեւը բարձրացավ, ցցվեց, ու յես կախ ընկա ողում՝ մոտներս վերե: Մեկ ել առկիցի ու՝ թրո՛մբ՝ գետին ընկա. թեւս կտրվեց: Յավս մոռացած՝ մտեցի սազերի մոտ. բայց ուշ եր. բազեն մեկին ճանկած՝ թռչում եր:

Ճիշտ ե, բժիշկն ոգնեց, թեւս տեղը գցեց, բայց այդ յերկար չտևեց, և մի տարի չանդամ՝ ուրի՛շ փորձանք սրտահեց, ու թեւս նոսկ կտրու՛կեց. ու եսպես ե մնում ե մինչև հիմա... Ա՛յ թե չար եյինք մենք. չար եյինք ու տնտեր:

Հե՛յ, գարուն ե,
պայծառ դարուն,
սպասում ենք
մենք ձեր գալուն,
վերադարձե՛ք,
լա՛վ թռչնիկներ,
մեր արագի՛լ,
սարյա՛կ, ծիծե՛ռ:

Մենք ձեզ համար
ծառի ճյուղին,
կտուրի տակ,
սյունի գլխին՝
բարձր ու մաքուր
բուն ենք շինում,
հերվա նման
տուն ենք շինում:

Պատրաստել ենք
մենք ձեզ համար
ուտելու շատ
հարուստ պաշար,—
կուտ ու կորեկ,
հացի փշրանք,
ճանճ ու մթեղ,
ձեզ շատ կտանք...

Արդեն մեզ մոտ
գարուն է տաք,
ե՛յ, արագի՛լ,
ծիծե՛ռ, սարյա՛կ,
սպասում ենք
մենք ձեր գալուն,
Հե՛յ, գարուն ե,
պայծառ դարուն:

Յես ուզում եմ ձեզ կարմրախայտ ձկան մասին
պատմել:

Ամբողջ որը բարակած աշնանային ջրերում կար-
մրախայտ եյինք վորսում:

Մեր կողմերում ուռկան գցելու սովորություն չկա-
լեռնային հոսանուտ գետակներում կարելի՞ յե ուռկան
գցել: Իհարկե չէ:

Դե հիմա լսեցե՛ք:

Յես, Հանեսը, Ղաճմանց Ակորը և Դարբնանց Գրի-
գորը վրա եյինք թափվում, քարերը, թմբերը յետ տա-
լիս, ճյուղերով գետակի հունը փոխում: Ջուրն սկսում
եր հոսել ուրիշ հունով, և մենք գոռում—գոչումով հա-
վաքում եյինք ցամաքող հունում թալրտացող կարմրա-
խայտերը:

Մի որ ել շիշը վառող լցրինք, բերանը հողով պինդ
ամրացրինք ու գնացինք թխկուտի մեծ լիճը: Այդ լճի մա-
սին հեքյաթներ եյին պատմում:— Ասում եյին, վոր
նրա մեջ փթանոց ձկներ կան: Իսկ մեզ այդ բանը շատ եր
քաշում: Լիճը, վոր գետի ամենամեծ ջրվեժի տակն եր
դանվում, ահագին բարձրությունից ընդունում եր ջուրն
իր մեջ. ձկները չեյին կարողանում դեպի վեր բարձրա-
նալ, և աշնանամուտին գետի հոսանքն իվեր գնացող
ձկները կանգ եյին առնում և ձմեռը ծվարում մեծ լճի
քարերի տակ: Մեր մեջ ձուկ վորսայու վարպետը Դարբ-
նանց Գրիգորն եր: Նա Փիթիլը վառեց ու կանչեց.

— Փախե՛ք, գցեցի:

Մենք փախանք, թաղնվեցինք ծառերի տակ և սըր-
տատրով սկսեցինք լճին նայել: Գրիգորը շիշը գցեց զճի
մեջ ու հասակով մեկ պտուկեց: Լավեց մի խուլ թնդյուն.
Ջրի կաթիլները փայլեցին ողում և արևի տակ չողացին
աղամանդների նման:

Մենք ճիշտ, աղաղակով վաղեգինք դեպի լիճը ու
սկսեցինք մեկիկ—մեկիկ համաքել ջրի յերեսին դուրս
յեկած կարմրախայտները: Պայթյունից ու վառողից

նրանք չլմեղ եյին, նմաղած՝ բերանները բաց ու խռվի,
եյին անում:

Այդ յերեկո մենք լալ տապալած ձուկ կերանք:

Հայրս, ուստա Ստեփանը, մի որ մի դուլ կիր բե-
րեց, տվեց մեզ ու ասաց.

— Թե վո՞ր դռչաղ եք, կրով ձուկ բռնեցե՛ք:

Նա մեզ սովորեցրեց կրով ձուկ բռնելը: Կիրը վերց-
րինք ու վաղեցինք թթու ջրի կողմերը: Հասանք գետը:
Բարձրացանք ջրվեժի ամենաբարձր տեղը և այնտեղից
կրով լիքը դուլը թափեցինք ջրվեժի սահանքի մեջ:
Կբաջուրը թափով լցվեց ջրվեժի ներքևում գտնվող լի-
ճը: Ջուրն սկսեց խշշալ, յեռալ: Ջուրն սպիտակ թա-
նաքի գույն ընդունեց: Մեկ ել ձկները դուրս թափվեցին
ու կուրացած՝ սկսեցին այս ու այն կողմ գնալ:

Մենք դուլերը լցրինք կարմրախայտով:

Մեր ուրախությունից ձորը թնդում եր:

Ս Ա Մ Ի Ն

1

Սամին մի խելոք, լալ սահիբ¹⁾ ունի,
Բայց նա մտրակով ծեծում ե, վառում.

Սամին մի խելոք, լալ սահիբ ունի,
Բայց նա Սամին մարդ չի համարում:

Նա մի աչքով ե նայում Սամին,—

«Շնորհակալ եմ» — չի ասում գոնե.

Ածիլվելու ջուր տալիս ե Սամին,

Սահիբի համար թամբում ե պոնի²⁾:

Յեթե մազաչափ սխարլի Սամին,

Սահիբը, ինչպես վիշնուն³⁾, հասնում ե

¹⁾ Սահիբ — տեր, պարոն.

²⁾ Պոնի — մի տեսակ փոքր ձի.

³⁾ Վիշնուն — հնդկական աստված.

Յեկ իր ճիպոտով հենց այդ նույն ժամին
Վոտներին զարկում ու ցավացնում ե:
Սակայն իզուր չեք, վոր Բեջապուրում



Սամին հայրը արագավազ եր.

Վորդու վոտներն են հիմա սովորում:

Հոր վոտները պես դես ու դեն վաղեկ:

Այդ տարին չար եր, բարով չբացվեց,—
 Կլորականջիկ, մկանուտ պոնուկ՝
 Մի մատակ սև ձի շատ ուժեղ խածեց.
 Յեվ գոռաց վողին չար՝ թելեֆոնում:
 Սահիբը մի որ շատ կանուխ դարթնեց,
 Ուղեց լրագիր կարդալ այդ ժամին,
 Գոնդը՝) այդ ասին շատ գոռոզ հայտնեց,
 Բայց վոչ լրագիր չեկավ, վոչ Սամին:
 Սահիբն ստիպված ուրիշին ասաց,
 Վոր ածիլվելու համար ջուր բերի,
 Յեվ,— ինչ վոր յերբեք դեռ չեր պատահած,—
 Գարի չկերած՝ դուրս գնաց ջորին:

3

Յետ յեկավ Սամին յոթ ռից հետո,
 Ինչպես իր հոտից բաժանված այծիկ,
 Յեկավ վիրավոր, արնոտած վոտով,
 Ճնցոտիներով, նիհարած քաղցից:
 Ուռած կոշտերի կապույտն եր հիմի
 Փայլում, ինչպես մի վոսկի՝ իր նիշով:
 Սահիբի մի աչքն եր տեսել Սամին,
 Իսկ հիմա տեսավ յերկուսը խոժոռ:
 — «Ո՞ւր եյիր կորել, դո՛ւ, պոչատ կապիկ:—
 Զոճվում եր Սահիբն ճոճաթոռի մեջ:
 Պատասխան տվեց Սամին հանդարտիկ:
 — Յես վախեցա քո ճիպոտից անվերջ,
 Ուղեցի գնալ Մեծ իշխանի մոտ,
 Մեծ քան բրամինը՝) և ռաջան՝) կյանքում,
 Բայց մոլորվեցի ճամբին քարքարոտ,
 Ինչպես կատվի կույր ճագը տանիքում:

1) Գոնդ—մի տեսակ մետաղյա դանդ.

2) Բրամին—հոգևորական.

3) Ռաջա—իշխան.

— Դու ծնված ես միշտ մնալու հլու,
 Յեղնելու կանուխ՝ ջուր տալու համար,
 Պոստը, վաղելու ախոռ սրբելու,
 Գո տերը յե՛ս եմ, կապիկ դու հիմար:

4

— Զյուների յետև, սանդուխքի նման՝
 Վորով կարծես թե մարդ յերկինք կենի,
 Ապրում ե նա մեծ քաղաքում հիմա,
 Յեվ մարդիկ նրան կանչում են Լենինի:
 Նա հաց ե տալիս մարդկանց սովատանջ,
 Յերբեք մտրակով նա մարդ չի ծեծում:
 Սամին սերում ե ցեղից Մակրատա,
 Բայց նրա համար ցեղը կթողնի
 Յեվ ածիլվելու նրան ջուր կտա,
 Պոստը կվաղի, կմաքրի պոնին:
 Ու դրա համար կտա մեծ Լենինին
 Այնքան ուռալիաներ՝), իմաստուն խոր
 Վոր դեռ չի տվել վոչ մեկը մեկին,—
 Սամին կջնջի տերերին անդուծ:

5

— Վո՞րտեղ լսեցիր այդ, վողորմելի:
 Քմծիծաղ տվեց Սամին խորամանկ:
 — Այնտեղ, ուր վտանգ կա ճերմակներին,
 Ամբոտ սարի խուլ կրպակների տակ:
 Այնտեղ ամեն ինչ գիտեն առանձին,
 Գիտեն սուղրայի՝) մտքերը թաղուն,
 Գիտեն՝ ինչ արժի Ռոխիլքենտում ձին,
 Յեվ ինչքան ե այդ Լենինին իմաստուն:

1) Ռուսիա—հնդկական դրամ.

2) Սուղրա—ստորին խավ Հնդկաստանում.

— Դե', կորի'ր, — գոռաց տեր անգլիացին:
Հաղթանակ տարած հեռացավ Սամին,
Սահիբը ներսում փակվեց առանձին,
Դուրս չեկավ նույնիսկ իր ճաշի ժամին:

6

Յեվ ծնկի յեկած ու նիրհուն՝
Լուրջ աղոթում եր Սամին մտահոգ
Այն մեծ սահլիքին, հեռավոր Լեննուն՝
Անհասկանալի (նչպես մի իող¹⁾),
Վոր Սամու փոքրիկ աղերսն եր լսում
Իր մեծ քաղաքում, ե'յ, վորին վոչ միշտ
Կարող ե հասնել թռչունը իր սուր
Թռիչքով, նույնիսկ փայլակից ել խիստ.
Նա պիտի թրջվեր անձրևից, անշուշտ,
Փիղը վազելուց՝ պայթեր տապալաքին,
Ու սահիբների կառքը հրաշունչ
Պիտի փչրվեր, ինչպես ապակին:

7

Այդքան հեռու յեր գտնվում Լեննին,
Բայց լսեց Սամու աղերսը մեկ-մեկ,
Վոր աղերսում եր արցունքն աչքերին,
Ծնկաչոք յեղած, մտատանջ ու հեք,
Բայց վոտքի յելավ շատ թեթև ու ժիր,
Ասես՝ հոգերը լավ յուզով ոճեց:
Իջնող յերեկոն սև դուլբերով իր
Նրա վրան իր բարիքներն ածեց.
Կարծես նա նորից ծնվեց շատ թեթև, —
Այս անգամ արդեն մարդ ե պայքարող,
Յեվ իրեն յերբեք ել այտուհետե
Յեվ վոչ մի սահիբ դարկել չի կարող:

¹⁾ Իող — հնդկական գետնական, փրկսովա.

Ընկեր Լենինի քույրը պատմում ե.
«Ամառը Վալողյան վազում եր բակում. այգում՝
բարձրանում եր ծառների վրա, մեղ հետ զանազան խա-
ղեր եր խաղում: Առանձնապես սիրում եր կրոկետ խա-
ղալ: Ձմեռը սիրում եր փոքրիկ սահնակով սղջալ սառ-
ցե բլրակից, վոր շինված եր չինում մեր բակում. սիրում
եր նաև ընկերների հետ ձնաղնդի խաղալ:

Ամառը մենք մեր ծնողների հետ հաճախ հյուր ե-
լինք գնում Կադանի նահանգի Կոկուշկինո գյուղը, մեր
ազգականների մոտ: Այստեղ Վալողյան շարունակ գյու-
ղի յերեխաների հետ եր լինում: Նա քաղաքից իր հետ
գյուղն եր բերում զանազան գույնի կոճիկներ և գյուղացի
յերեխաների հետ կոճի յեր խաղում, և հազիվ եր պատա-
հում, վոր տարվեր. և գյուղացի յերեխաներին այդ մեծ
ցավ եր պատճառում:

Յերբ հասակավորները գնում ելին դաշտ՝ գիշերա-
պահության, Վալողյան նրանց խնդրում եր, վոր իրեն
ել տանեն, ասելով. «Յես ձեզ համար թեյ ու շաքար եմ
պատրաստել. կրակ կանեմ, ճյուղեր կկտրոտեմ»: Բայց
նրանք մերժում ելին ու ասում. «Ձե', Վալողյա, դու
փոքր ես, ի՞նչպես կարող ես մեզ հետ գիշերապահու-
թյան գալ»:

Բայց Վալողյան ինքն իրեն սրտասնդելով՝ հաճախ
նրանց հետքը բռնած, գիշերապահության տեղն եր
գնում:

Վալողյայի ամառային սիրելի գվարձություններից
ելին ձկնորսությունն ու չոդայր, իսկ աշնանը նա սիրում
եր թռչուններ փորսալ և զանազան թռչուններ գնել: Նա
թռչուններին յերկար չեւ պահում վանդակում, շատ
չուտով արձակում եր:

Վալողյայի հասակակից ընկերներից վոչմոք չդի-
տեր նրա նման գվարձանալ և չարություն անել: Նա
չատ ուրախ և բնեկրություն սիրող լեռնիա յեր: Նրա
բոլոր խաղերը և չարություններն անմեղ ելին:

Վալուդյան սիրում էր չարութիւնն անել, բայց և սիրում էր լավ սովորել: Նա կարգաւ-դրել է սովորել հինդ տարեկան հասակում, մեր մոր ոգնութեամբ: Վալուդյանի հետ միասին կարգաւ է սովորել նաև քուլթուր—Ուլիան: Նրանք յերկուսն ել ընթերցասեր եյին. կարդում էյին մանկական գրքեր, մանկական ամսագրեր:

Նրանք չուտով սկսեցին ուստաց պատմութիւնից պատմվածքներ կարդալ, վոտանավորներ սերտել: Ընթերցանութիւնը վերջացնելուց հետո քուլթուր ու յեղբայր դուրս եյին վազում, գնում խաղալու:

Ինն ու կես տարեկան հասակում Վալուդյան մտավ գիմնազիայի առաջին դասարանը: Նա սովորում էր հեշտ և սիրով. նա չատ ընդունակ էր ու աշխատասեր. հայրս էր սովորեցրել թե նրան և թե մեզ բոլորիս—լինել ջանասեր և դասերն ու աշխատանքները կատարել ճիշտ և ուշադիր: Վալուդյան թե իր բացառիկ ընդունակութիւնների և թե դասարանում դասերին ուշադիր լինելու շնորհիւ տանը դասերի վրա չատ ժամանակ չէր դործ գնում: Նա միայն թեթեակի վերստուգում էր զարոցում անցածը:

Յերեկոները—մեծ ու փոքր բոլորովում էյինք սեղանատան մեծ սեղանի շուրջը՝ մեկ ընդհանուր լապտերի տակ, մեր դասերը սովորելու և մյուս աշխատանքները կատարելու: Վալուդյան իր դասերն արդեն վերջացրած էր լինում և սկսում էր շատախոսել, փոքրերին ծաղրել, բարկացնել:

— Վալուդյա, բավական է, հանգիստ կաց:

— Մայրիկ, Վալուդյան խանդարում է մեզ:

Բայց Վալուդյան նստելուց ձանձրացած՝ շարունակում էր չարութիւնն անել, դեռ ու դեռ պատվել:

Վալուդյան բոլոր դասարաններում ել լավ էր սովորում և բոլոր առարկաներից ել հավասար չափով առաջադեմ էր:

Նա չափազանց բարի յեր և ուրիշներին կարեկցող: Վալուդյան դեռ վաղ հասակից հետաքրքրվում էր քաղաքական կյանքով և աքսորյալների վիճակով, վո-

րոնց մասին նրան պատմում էր նրա մեծ յեղբայրը—Սլեքսանդրը: Վալուդյան չատ էր հետաքրքրվում բանվորների ու գյուղացիների վիճակով: Նա իրեն հուզող բոլոր խնդիրները քննում էր իր մոտիկ բարեկամների, դպրոցական ընկերների և խաղընկերների հետ միասին: Նա աչքի յեր ընկնում իր բացառիկ յեռանդով՝ հաստատուն կամքի ուժով և ընկերների վրա ազդելու հմտութեամբ, համոզելով և ապացուցելով նրանց իր կարծիքների ճշտութիւնը:

Յերր նա ավելի մեծացավ, ամբողջ որերով աչքը գրգից չէր կտրում: Նա վոչ միայն կարողանում էր գրքերը կարդալ, այլև ուսումնասիրել—կենսագիտներ էր կազմում, հատվածներ արտագրում, վորպեսզի ամենակարեւոր տեղերը հիշի:

Նա գրքերից բաժանվում էր միայն գրոսանքի կամ զրույցի ու վիճարանութեան համար իր այն փոքրաթիւ ընկերների հետ, վորոնք նույնպէս պատրաստվում էյին իրենց նվիրելու հեղափոխական գործունեութեան:

Վալուդյան իր հարազատներին չատ էր սիրում, մանավանդ մորս, վորի կարծիքներին չատ ուշադիր էր: Վալուդյան սկսել էր ծխել. մայրս վախենալով, վոր ծխելը նրա առողջութիւնը կվնասի, սկսեց համոզել նրան, վոր ծխելը թոյնի՝ բայց մորս բերած պատճառարանութիւնները ծխելու վնասակարութեան մասին չազդեցին Վալուդյանի վրա: Այն ժամանակ մայրս հիշեցրեց նրան, վոր նա, սեփական աշխատանք չունենալով, ավելորդ ծախս, թեկուզ մի կոպեկի, թույլ չպետք է տա իրեն (այդ ժամանակ մեր ամբողջ բնականիքն ապրում էր մորս ստացած փոքրիկ կենսաթոշակով):

Մորս այդ խոսքերից ազդված՝ Վալուդյան ընդմիջութեց ծխելը:

Վերջը փոքրիկ Վալուդյան վախկեց, դարձավ ընկեր լենին—բանվորների ու գյուղացիների առաջնորդ և ուսուցիչը: Նա մեծամեծ գործերի հետ հմուտացավ առանձին մարդկանց կարիքը: Նա իր ամբողջ կյանքը նվիրեց բանվորներին և գյուղացիներին, ոգնելով նրանց

մեծ թե փոքր կարիքների ժամանակ: Նա մի առանձին ջերմ սիրով զբուցում էր նրանց հետ, խորհուրդ տալիս, սովորեցնում էր նրանց հեղափոխական կռիվին, աշխատում էր ոգնել ամեն մեկին՝ փորձան կարող էր: Բայց միևնույն ժամանակ գիտեր նաև ուրախ կատակներ առնել:

ՈՒՂԻՂ ԺԱՄԸ ԶՈՐՍԻՆ

Հունվարյան ցուրտ որ էր. փողոցում յեռում էր կյանքը: Քաղաքային բանկի դուռը դանդաղ բացվեց և դուրս յեկավ մի յեփրոպական տարադով կռիվի հազնված մարդ: Նա պորտֆելը ձեռքին ինչ-վոր տեղ էր չտապում:

Դրսում նրան սպասում էր ամուսին. չոֆերը նրան տեսնելուն պես աշխատեցրեց մեքենան, իսկ պորտֆելը փոր մարդն ամուսնու բարձրանալով՝ չոֆերին ինչ-վոր հասցե պատմեց:

Այս տեղի յեր ունենում Յեփրոպայի քաղաքներից մեկում, վորտեղ ապրողներից վոմանք իրենց համար սեփական ամուսնու ունեն:

Այս պորտֆելավոր մարդը ինքն էր՝ անգլիական հայտնի վաճառական:

Նա մեկնում էր մի ուրիշ քաղաք, վորտեղ պետք և մասնակցեր վաճառականների խորհրդակցությանը:

Միտորը ինքն այդ խորհրդակցությանն անպայման պետք և մասնակցեր, հակառակ դեպքում նրա առևտրական գործերը վատ ընթացք կստանային: Պետք էր մեկնել, անպայման առաջին իսկ գնացքով:

Հիմա ժամը յերեքն է, և ազատ կարելի չէ ամա գնել:

Իսկ ամուսն արագորենաց սլանում էր յեփրոպական քաղաքի հարթ փողոցներով:

Միտորը ինքն, վորի գլուխը շատ մտածելուց ծանրացել էր, աչքերը հանդարտ փակած ննջում էր:

Հանկարծ մեքենան կանգ առավ փողոցի ավելին. միտորը ինքն վեր թռչելով՝ աչքերը լայն բացեց:

Նրա դիմաց կանգնած էր չոֆերը՝ գլուխը բաց:

Միտորը ինքն արագ մեկնեց թեք և նայեց ժամացույցին. ժամը չորսն էր:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց նա չոֆերին:

Շոֆերը գլխարաց, հանդարտ կանգնած՝ ձայն չէր հանում:

— Հա՞մը ես, ինչ է, — վորոտաց սրանեղված ինքն. — գնացքից ուշանում ենք:

— Հունվարի քառասունին ուղիղ ժամը չորսին հողին են հանձնում լենինին, սը՛ր:

Միտորը ինքն մի վարկյան քարացավ, հաստ սիգարն ատամների մեջ չուռ ու մուռ էր տալիս, և սիգարի ծայրին հավաքված մոխիրը թափվում էր նրա թանդագին վերարկվի և գեղեցիկ մորթե ոձիքի վրա:

Ապա գազանալսած վորոտաց.

— Վաղվանից կորի՛ր, ել աչքիս չերևա՛ս:

Շոֆերը վոչինչ չպատասխանեց:

Նա հանդարտ կանգնած էր, և քամին խաղում էր նրա մազերի հետ:

Ինքն չգիտեր, թե ի՞նչ աներ. տասներկու տարվա ընթացքում նա վոչ մի անգամ չէր բացակայել կամ ուշացել, իսկ հիմա... ուշանում էր և մեծ վնաս էլ պետք է կրեր:

— Հազար ֆունտ-ստերլինգ կտամ, միայն թե գնա՛, գնացքից ուշանում եմ, չտաք դործ ունեմ:

Շոֆերը տեղից չհարժվեց անդամ:

Միտորը ինքն շատ լավ գիտեր, վոր յեթե յերկու, յերեք, հինգ, նույնիսկ տասը հազար ֆունտ-ստերլինգ էլ տալու լինի, բան դուրս չի գալու, ուստի և ձայն չհանեց. չոֆերն էլ լավ գիտեր, վոր վաղն ամուսնի մի պատու հացի յե մնալու. վաղն իր կնոջը, յերեխաներին

փողոց կենտեն, իսկ ինքն ավերացնելու յե դործադուրկ-
ների թիւը և մնալու յե քաղցած. բայց լուռ եր և դեռ
կանգնած եր անշարժ:

Միտաբը Խեզը մտածեց՝ յեթե Կելիմը— չոփերը
կանգնեցրեց մեքենան և չի պատասխանում, ուրեմն
նրան պահողը մի այնպիսի ուժ է, վորին փողը վռչինչ չի
կարող անել:

Միտաբը Խեզը հասկացավ, վոր նրան վռչնչով դրա-
վել չի կարող—վո՛չ փողով և վո՛չ վոսկու փայլով. այդ
ժամանակ ամեն տեղ կանգ են առել ավտոները, և ուղիղ
ժամը չորսին, ծովերից այն կողմը, հողին են հանձնում,
այն մարդուն, վորի հիշատակն ապրում է միլիոնավոր
մարդկանց սրտերում:

Նա պատկերացրեց, վոր հիմա ամբողջ հազարա-
վոր ավտոներ, վորոնցով Խեզի նման միտաբներ են գը-
նում, կանգնած են դաշտերում, փողոցներում: Յեվ
վոչ միտաբները, վոչ պետութունը վոչ մի միջոց չու-
նեն տալու Կելիմին և հազարավոր Կելիմներին, վոր
նրանք գլխարկները ծածկեն և մեքենաներն աշխատեց-
նեն:

Խեզը չըջվեց ավտոյի բազմոցի վրա և թաշկինակը
հանելով մաքրեց վերարկվի վրա թափված ծխախոտի
մոխիրը:

Ժամը չորսից հինգ րոպե անց Կելիմը գլխարկը ծած-
կեց և նստեց ղեկի առաջ:

Ավտոն ճիշ արձակեց, դղրդաց, լույսերը վառվե-
ցին, և առաջ սլացավ:

Իսկ միտաբը փաթաթվեց վերարկվի մեջ և հուղ-
ված՝ ընկավ մտածմունքի մեջ:

Այս փողոցում, ճամբի վրա,
Կիսամութին թե լույսին,
Աշխատում են հայր ու տղա
Ամբողջ ոբը միասին:

Ալեորը խահերի հետ
Շարում է քարը քարի,
Վորդին ջահել ճարտարապետ՝
Ավարտել է այս տարի:

— Հայրի՛կ, պատը թեք է գնում,
Նայի՛ր՝ դիժը ո՛ւր մնաց.
Հայրի՛կ, արա՛գ, յետ ենք մնում,
Տե՛ս՝ արևը թեքվեց ցած:

Զվարթանում է ծերունին,
Խինդ է վառվում իր հոգում,
— Ծարտարապետ վորդի ունեմ,
Մատաղ լինեմ ջինջ հոգուն...

— Հայրի՛կ, յեղել ենք մրցության
Կառուցումի պայքարում,
Վոր մեր կամքը՝ լի խնդությամբ
Անմահանա այս քարում:

Յեվ ծերունին թափ է առնում,
Խառնում է ցեխը քարին,
Շաղախում է քարաշարում
Ժպիտներն իր բարի:

— Հայրի՛կ, սիրտս չի համբերում,
Ո՛ւժ տուր, թա՛փ տուր քո ձեռքին,
Յես առաջին քարն եմ դնում
Սոցիալիզմի մեծ շենքին...

Յեւ յամեն ուր, ճամբի վրա,
Կիսամութին թե շուշաին,
Աշխատում են հայր ու տղա
Ամբողջ օրը միասին:

ԲԵՐՔԻ ՅԵՐԳԸ

Յերբ եր ամառ արեառ,
Արտն եր վոսկի ու խնդուն,
Յերբ կանաչ եր հանդ ու քար,
Յեղա մի ուր յես հանդում:

Արտում վոսկի որորուն,
Մի գյուղացի խինդով վառ
Մի գույգ հասկ եր տրորում
Իր բռան մեջ արեհար:

Ժպիտներով վողոցած
Չույգ ափի մեջ բերքն իրա,
Յեւ շուրթերը իրա թաց
Հպեց հուզմունքով նրան:

Ու քրտինքի մի կաթիլ
Ճակատից իր ընկալ վար,
Ընկալ վոսկի հատիկին,
Արեահամ, արեառ:

Յեւ գցեց նա իր բռան
Հատիկները դեպի շեղջ,
Իր խնդությունը դրած,
Իր քրտինքը նրանց մեջ:

Հիմա ո՞վ է ծամում այն
Հացի պատառը վոսկի,
Վոր հագեցած խնդությամբ
Յեւ յեռանդովը լաղկի,

Յեւ ժպիտով իր պայծառ
Ու հույներով վողոցուն,
Վոր գյուղացին արեառ
Ափի մեջ եր տրորում:

Մի յերեխա՞ արեաչ՝
Ատամներով իր կաթի,
Վոր կյանքն ունի իր առաջ՝
Նման չքեղ հեքիաթի:

Մի ծերունի՞ դառամած,
Վոր քայլում է դեպի մահ,
Վոր իջնում է ձորը՝ ցած,
Կամ մահանում է հիմա:

Կամ մի բանվոր յեռանդուն,
Կյանքի կերտողը համառ,
Վոր քրտնաթոր ու անդուլ
Վոսկի որերի համար:

Ուժ է յեռանդ է տալիս
Յերկաթներին ու քարին,
Յեւ իր կյանքը՝ պանծալի
Մեր ընդհանուր պայքարին:

Գուցե յես եմ կերել այն
Վոսկի բուռն այդ բերքի,
Ու նրա վառ խնդությամբ
Ծնունդ տվի այս յերգին:

Կամ գուցե դու, գուցե նա,
Ով վոր է թող իմանա՝
Ժպիտներով խնդության,
Քրտինքով եր ցողված նա:

Պարֆեն Դուդկինի վորդի Պրոչկան ե՛ն դիտեց աղ-
քատության մեջ մեծացալ:

Պրոչկան մի մատ յերեխա յեր, բայց դեռեր, վոր
կզա ժամանակ՝ ինքը կմեծանա, կզնա քաղաք, մի զավ
դործի կմանի ու կոգնի հորը:

Մի օր, ինչպես յեղավ, մեկել մի ձիավոր յեկալ
զավառից ու դեմ ու դեմ զնաց քյոխվի տունը: Քյոխվան
դուրս յեկավ, կանչեց դյուդի մեծերին, ու ձեռաց վողջ
քյուղը հավաքեց քյոխվի տան բոլորքը:

Ինչ վոր մեկը լրագիր կարդաց ու մեկն ել բղավեց:
Հետո Պրոչկան տեսալ, վոր ժողովուրդը ուրախ-զվարթ
լնկալ փողոցները:

Այստեղ Պրոչկան լսեց՝

— Հեղափոխությո՛ւն:

— Մոսկվայում հեղափոխություն ե, ամբողջ հո-
ղը՝ ժողովրդին:

— Իշխանությունը ժողովրդին:

— Կալվածատերերին քչե՛լ:

Ու Պրոչկան մտալ ժողովրդի մեջ, իրեն գցեց տառջ
ու կարմիր դրոշակների հետ սկսեց ման գալ գյուղամեջ:

— Հեղափոխությո՛ւն:

Բայց Պրոչկան սրտումը ցալ ունի: Ճիշտ ե՛ խա-
նութպանին ու յեկեղեցու հոգեբարձվին քչել են ու նրանց
տեղը աղքատների նստացրել, բայց ելի կյանքը դժվար
ե:

Հայրը հիվանդ, մայրը հիվանդ: Ձմեռն ել վրա
տվեց:

Մայրն ասաց.

— Պրո՛չկա, հերդ հիվանդ ե, գնա՛ մարդամեջ, աշ-
խատի՛ր...

Պրոչկան քչից-չատից կարգալ դիտեր: Կարդաց ու
խմացալ՝ ինչ բան ե հեղափոխությունը, ովքեր են կո-
մունիստները, ով ե Լենինը: Պատերազմից վերադարձած

Ստեփանը նկատեց, վոր չատ ե հարցնում Լենինի մա-
սին, ու մի անգամ, իրիկվանը, Լենինի կյանքի մասին
պատմեց Պրոչկային:

— Դու նրան տեսե՞լ ես, — հարցրեց Պրոչկան:

— Հա՛, հետը խոսացել եմ:

— Չե՛կ՝:

Ու յերբ Պրոչկան Ստեփանի մոտ եր լինում, իրեն
չատ լավ եր զգում. բայց հենց մանում եր տուն թե չե՛.
սիրտը լցվում եր, չեր կարողանում տանի: Իրենից փոք-
րերը հաց եչին ուղում: Ի՞նչ աներ Պրոչկան: Վեր կա-
ցալ, զնաց խորհուրդ. աշտեղից դուրս յեկավ դյուղա-
մեջ և սկսեց ցրտին թախառել. չողջ մարմնով դողում
եր: Յեկավ տուն, սեղանի վրա չոր հացի կտորաձև կար
դրած, մի աման ել ջուր: Չոր հացն ուտելուց հետո ավե-
լի սուր քաղց զգաց:

Յերկար ժամանակ նստած մտածում եր: Հիշեց Ստե-
փանին, նրա պատմածները Լենինի մասին... ու մի միտը
սկսեց վառել, քրքրել նրա ուղեղը: Միրան սկսեց խփել.
ձեռքերը դողում եյին, և զարմանալի բան՝ մի տեսակ
ուրախություն յեկալ վրան, ասես չորս կողմը լուսա-
ցալ:

— Եղ ա՛, Լենինը:

Դողալով ձեռքը պարզեց գրքերի տալրակին:

— Եղ ա՛... մենակ թե... վախում եմ...

Ձեռքը պարզեց, դուրս հանեց տետրակը, մատիտը,
նայեց չորս կողմը, հետո, վախը սրտում, մի կողմից
ել ուրախ՝ հողոց հանեց ու գրեց.

«Քեռի Լենին»

Դչուխը թափ տվեց ու վճռական ավելացրեց.

«Պրոչկայից».

«Եղ յես եմ գրում, քե՛ռի, յես, Պրոչկան, Դուդկին
Պարֆենի տղեն:

Դու եղտեղ ես ապրում, քաղաքումը, իսկ յես հորս
հետ հալ ու մալ ենք լինում: Իսկ մեր դեղը մեծ ա, քա-
ղաքից հեռու: Իմ հերս աղիքացալ ունի. մերս պատկած

ա սաղ ու տնքում ա. իսկ մենք իսկի հաց չունենք, բան չունենք ուտելու. իսկ հարուստները չեն տալի. մերս տերտերակնով լվացքն ել չի անում. ձեռների կաշին պլոկվել ա: Իսկ իմ հերը—անունը Պարֆեն ա, կարող ա լսած լինես—ենպես գուցնը թափած ա ու սաղ կյանքում կռաւած ա ման գալի:

Քե'ռի, գիտեմ, դու եղտեղ կարգադրություն ես արել, վոր մեզ հող տան,—հողը տվին, եղ մեկը գրոշտ ա, մենակ՝ ողու 1 չկա: Ախր մեր մատակը հյա ցանքսը չեղած սատկեց. ենքան լղար եր վո'ր: Ու հիմի վոչ մինը չունենք: Վոչ մատակ ունենք, վոչ կով ունենք: Բա ի՞նչ պիտի անենք, մենք չենք իմանում: Խորհուրդը, անդամները մեզ տերություն չեն անում, իսկ հերս պառկած ա սաղ ու սպասում ա, ու աղոթք ա անում: Յես ել ասում եմ նրան. «Ժամանակը յեկել ա, իսկ աւածուն հավատաւ վոչ. սուտ ա, մեզ խարել են: Հերս ուշունց ա տալի»:

Պրոչկան այստեղ կանգնեց, աչքերը մթնեցին, ընկալ սեղանի վրա, հեկեկաց ու արտառվախառն շարունակեց.—«դժվար ա ինձ համար, քե'ռի, թե իմանա'ս: Ա՛յ, 12 տարեկան եմ ու աշխատել ա հարկավոր: Մեր տանը շատ ենք, սաղ «խուժան» ա, ու բոլորն ել հաց են ուղում: Ի'նչ անեմ՝ իմանում չեմ: Ախպերներէս ֆրոնտ են տարել, ու իմ հույսը մենակ քեզ վրա յա: Դրա համար ել քեզ եմ գրում: Դե՛ կհասկանաս, ե՛լի: Յես դիտեմ, դու բարի յես:

Են ել եմ ուղում գրեմ, վոր պատկերդ մեզ մոտ Խորհրդումը տեսնում եմ: Գյուխդ քաջալ ա, մի հատ ել պուճուր միրուք ունես ու մի աչքդ ել ուրիշ տեսակ ա մտիկ տալի:

Բան եմ ասում, քեռի Լենին, թե պատահի վոր աղատ ժամանակ ունենաս, կամ խնդր մի տեղ դնալու լինես, են ժամանակը մոնց վոր լինի՝ դարձանք տնց կաց մեր դեղը: Չմեռը չգաս, մեր գեղը հեռու յա քաղաքիցը: Թե գաս, իմացած կաց՝ կրմրես անսլաղառ, ականջներդ, վոտներդ ցուրտը կտանի: Հենց վոր կգաս՝ դեմ

ու դեմ—մեզ մոտ: Ծիչտ ա, սամալար չունենք, բայց կճարենք հարեաններից: Մենակ թե մեր խրճիթը մրոտ ա, բայց դու ենպես կնստես, վոր շորերդ չկեղտոտվեն: Վոր գաս՝ շատ բան ունեմ, կասեմ քո ականջին: Գլխումրս շատ մտքեր կան. գնում են ու գալի: Ոչ ով չկա, վոր հետը խոսամ: Մերս չխոսկան ա, հերս ուշունց ա տալի սաղ:

Ետեղից մինչև կայարանը մենք քեզ արաբի վրա կտանենք, ինքս քեզ կտանեմ մեկն ու մեկի արաբի վրա: Կարող ա՝ նախագահը տա: Թե չտալին՝ մեկն ու մեկի ձին կլծենք, հետո յես աշխատանք կանեմ տեղը:

Քե'ռի, բա գիտե՞ս—յերազումս քեզ տեսնում եմ մի մի անգամ: Չեմ իմանում, յերազին դու հավատո՞ւմ ես, թե չե. յես չեմ հավատում...»:

Անկողնի մեջ յերեսաները շուռ յեկան. նրանցից մեկը վնթինթաց: Որորոցի յերեսան ծվաց:

Մայրը զարթնեց:

Պրոչկան նամակը թագցրեց ու կռացավ դրքի վրա:

Մայրը քնաթաթախ ձայն տվեց.

— Ի՞նչ ես անում եղտեղ:

— Կարդում եմ:

— Աքլորները յերկու բերան կանչեցին, պառկի, քնի՛:

— Ես ա վեր եմ կենում, ա՛ մեր:

Մայրը աչքերը խիեց, իսկ Պրոչկան շարունակեց.

«Ենքան ցավ ունեմ վո'ր: Ինչպես երեվում ա՝ ուշ ա: Ետեց, ե՛լի: Արի՛, ինձ ձեռաց կդանես: Յես պուճուր եմ, գլուխս՝ քաշ: Թե ժամանակ չես ունենա՝ գոնե նամակ գրի: Իրար նամակ գրենք: Շատ գրի, յես կարամ ջոկել: Մի բան ել ասեմ, քե'ռի, մեր մեջը մնա,—մտքումրս դրել եմ, վոր մեծանամ՝ գրվելու յեմ կուտակցության մեջը. պիտի կովեմ քյասիրության դեմ: Քյասիրությունը հարուստների յերեսիցն ա:

Եսքանը:

Իմ հասցեն ես ա. Պենդ. նահանգ. Չեմբաթսկի դա-

վտո, Սորաշեմկա գեղ. Դուդէկին Պարֆենի աղա Պրոշկա:
Կգաս, սպասում եմ:
Բարով մնաս:
Նա նամակը գրեց քեզ՝

Պրոշկա»:

Նա մի քանի անգամ դառն ախ քաշեց, չտալ չտալ
կարդաց նամակը, մի քանի բռն ջնջեց, նորն ավելաց-
րեց, թղթից ծրար չինեց, հետո մուր ածեց թանաքամա-
նում, խառնեց, չինեց թանաք ու գրչով ծրարի վրա
գրեց.

«ՄԱՍԿՈՎ, ՍՏԱՆԱ ԼԵՆԻՆ»

Առավոտ ծեղին նամակը գցեց արկղը: Նա համա-
տացած եր, վոր քեռի Լենինը նրան անպատճառ կնկա-
տախանի:

— Կպատասխանի՛:

Յեվ հրաշք: Շատ չանցած՝ խորհրդից մի մարդ յե-
կով Պրոշկայի և նրա հոր յետեից:

— Լենինից ձեզ թուղթ ա յեկել:

Խորհրդում քուրքը հաղին մի մարդ կարդաց Լենինի
նամակը:

Ի Ս Յ Խ Հ

Ժողովրդական կոմիտայնների

խորհրդի

Ն ա խ ա գ ա հ

—

Մոսկվա

Կրեմլ

26 XII, 1920 թ.

ՊԵՆՉ ՆԱՀ. ՉԵՄԲԱՐՍԿՈՒ

ԴՍՎԳՈՐԾԿՈՄԻՆ

Խնդրում եմ ամենալուրջ ուշադրու-
թյուն դարձնել Սորոկինկա գյուղի
գյուղացի Դուդէկին Պարֆենի աղքատ
գրության վրա: Տվեք նրան Մացպից
շորեր և ձի, վորպես կարմիր բանա-
կայինի ընտանիքի: Դավադրածից
բաց թողեք փախտ, գավազներն կոմից
հաց:

Նրա խորհուն՝ Պրոշկային ուղարկե-
ցիք քաղաքը սովորելու և աստիճանի
դպրոցում՝ պետական ծախքով: Նույն-
պես և լուրջ ուշադր էթյուն դարձրեք
տեղական իշխանության գործունեու-
թյան, նրա վերաբերմունքի վրա՝ դե-
պի չքավորները:

Կառարման մասին հաղորդել ինձ:

Ժիկ Նախագահ՝

Վ. Ուլանով (ԼԵՆԻՆ)

Պրոշկան Լենինի համար իր ամբողջ կյանքը կտա:
Մի կյանքն ի՞նչ, տասն և և վոր ունենա—բոլորը
կտա:

ԴԱՐԲԻՆՆԵՐ

Մենք դարբիններ ենք. հոգով արի յենք.
դարբնում ենք վաղվան բանալին:
Յեւի՛ր թափով դու, դարկի՛ր դու, մո՛ււրճ իմ,
պողպատ սալին ամո՛ւր դարկի՛ր,
դարկի՛ր, դարկի՛ր...

Մենք դարբիններ ենք. ազատ յերկրում այս
մենք լավ որեր ենք ստեղծում:
Չե՞ վոր իդուր չենք սպառում մեր ուժը.
իդուր չենք մենք մուրճով դարկում,
դարկում... դարկում...:

Չե՞ վոր ամեն մեր ուժեղ հարվածը
ցլրում է մութ ու բռնություն,

և հեռավոր չափ քաղաքների մեջ
բանվորներին կռիւի հանում,
հանում... հանում...

Դարբնում ենք մենք բանվորի կամքը,
դարբնում աշխատանքն իր ազատ.
ազատութեան այդ պաշտպանութեանը
զոհել ենք մեզ ու զոհ կտանք,
կտանք... կտանք...

Մենք դարբիններ ենք. հողով արի յենք.
դարբնում ենք վաղվան բանային:
Յելի՛ր թափով դու, զարկի՛ր դու, մո՛ւրճ իմ,
պողպատ սալին ամո՛ւր զարկիր,
զարկի՛ր, զարկի՛ր...

Յ ՊԱՐՄԱ ՔԱՂԱՔԻ ՅԵՐԵՆԱՆԵՐԸ

Իտալական Պարմա քաղաքի գործարանների բան-
վորները գործադուլ արին:

Նրանք չէին ուզում աշխատել այն աշխատավար-
ձով, վոր տալիս էին գործարանատերերը. պահանջում
էին ավելի բարձր աշխատավարձ:

Գործարանի տերերը չցանկացան բանվորների պա-
հանջը կատարել ու գործարանները փակեցին:

Բանվորներն է՛լ վիճին չէին ստանում ու շատ ծանր
պայմանների մեջ ընկան:

Նրանք քաղցած էին, բայց տերերին զիջել չէին
ուզում:

Բոլորից շատ տանջվում էին նրանց յերեխաները.
Նրանք քաղցից հիվանդանում էին, մեռնում:

Այդ մասին իմացան Ջենովա քաղաքի բանվորներն
ու վորոշեցին ոգնել ընկերներին:

Նրանք մտածեցին գործադուլ անող բանվորներին
յերեսաներին բերել իրենց մոտ՝ Ջենովա, բաժանել ըն-
տանիքների մեջ և գործադուլի ընթացքում կերակրել ու
խնամել նրանց:

Այսպիսով Պարմայի բանվորները կկարողանային
ավելի յերկար ժամանակ դիմադրել գործարանատերե-
րին ու ստիպված չէին լինի փոքրիկ աշխատավարձով
աշխատանքի անցնելու:

Այսպես ել արին:

Մի քանի ընկերներ ընտրեցին և ուղարկեցին Պար-
մա—յերեսաներին բերելու:

Պարմայի բանվորները, տեսնելով իրենց յերեսա-
ների տանջանքներն ու մահը, ուզում էին գործադուլը
դադարեցնել՝ առանց իրենց պահանջների բավարար-
ման, յերբ վրա հասավ այս ընկերական յգնությունը:

Բանվորներն ուրախութեամբ համաձայնեցին յերե-
սաներին ուղարկել Ջենովա, վորպեսզի իրենք ազատու-
րեն կարողանան շարունակել գործադուլը:

Յերեսաները վոր կուշտ յինեն, իրենք քաղցին ավե-
լի յերկար կդիմանան, և գուցե գործարանատերերը
զիջեն և աշխատավարձը բարձրացնեն:

Նրանք հավաքեցին բոլոր յերեսաներին և ուղար-
կեցին Ջենովա:

Մի ամբողջ գնացք լցվեց տարրեր հասակի յերե-
սաներով:

Ջենովայում սպասում էին այդ գնացքին:

Կայարանում բանվորների հսկայական բազմու-
թյուն եր հավաքվել: Ամեն մեկն ուզում եր գոնե մի յե-
րեսա վերցնել իր մոտ: Բացի բանվորներից, կայա-
րան էին յեկել Ջենովայի և այլ բնակիչներ: Ամենքն
ուզում էին դիմավորելու մասնակցել: Չանսպան կադ-
մակերպություններ իրենց գրոշակներով էին յեկել: Յե-

կել եր նաև մի յերաժշտախումբ: Յերեսաներն ել վա-
զելով յեկել ու զցվել էյին կայարան:

Առետուր անող կանայք լիք-լիք դամբարաններով
կայարան եյին բերել խմորեղեն, կարկանդակ և նա-
րինջ: Պատգամբներում, պատուհաններում խռնվել էյին
կանայք՝ ծաղիկները ձեռքներին: Ամբողջ քաղաքը դար-
դարված եր դրոշակներով, ինչպես մեծ տոներն սրերին:

Ահա լավեց շողեչարժի սուրոցը, հնչեց զանգը, և
զնացքը զանդալ մոտեցավ կայարանին: Գնացքի սղա-
տուհաններից դուրս եյին նայում յերեսաների գունաւ
դեմքեր:

Բազմությունը լուռ եր:

Գնացքը կանգ առավ: Հանկարծ լավեց յերաժշտու-
թյան ձայնը: Բազմությունը խուժեց վազոնները, յերե-
սաների մոտ: Փոքրերին դուրս եյին բերում ձեռքերի
վրա, իսկ մեծերն իրենք էյին դուրս թռչում:

Բոլորն ել նիհար էյին, գունատ, ախուր դեմքով:

Բայց յերբ յերեսաները լսեցին նվազի ձայնը, տե-
սան գեղեցիկ դրոշակներ, յերբ նրանց սկսեցին հյուրա-
սիրել մրդերով, քաղցրավենիքով ու կարկանդակներով,
նրանց դեմքերը սլայծառացան, ու մանկական ծիծաղը
հնչեց բազմության մեջ:

Իսկույն սկսեցին յերեսաներին բաժանել իրենց մեջ:

Մի բանավորի ընտանիք վերցրեց յերկու յերեսա. մի
ուրիշը անդում եր, վոր անսլայծառ ատղիկ տան իրեն:
Ու հանդուստացավ, մինչև չստացավ:

Մի յերիտասարդ կնոջ բոլորովին յերեսա չեր հա-
սել. նա վրդովված քայլում եր ու զիմում սրան-նրան,
վոր մեկն ել իրեն տան:

Կայարանում ամեն ինչ ուրախ եր: Յերաժշտությու-
նը նվազում եր: Արևի տակ ծածանվում էյին վոսկեգույն
դրոշակները: Մարդիկ ուրախ խոսակցում էյին միմյանց
հետ ու փայփայում յերեսաներին:

Վերջապես համբաւ ընկան:

Փոքրերին զրկած էյին տանում, կամ ուտերի վրա
նստեցրած, իսկ մեծերին՝ ձեռքերից բռնած:

Յերեսաները, մրդեղեն անուշ անելով, ուրախ-ու-
րախ խոսում էյին, բարձրաձայն ծիծաղում:

Յերբ բազմությունը յերեսաների հետ անցնում եր
փողոցներով, պատշգամբներին, պատուհաններից ծա-
ղիկներ էյին թափվում, յերեսաները սլարգում էյին
իրենց թափիկները և ծաղիկները բռնում:

— Հիանալի՛ յե, — ասում եր մի բանվոր մյուսին, —
յեթե միշտ այսպես անենք, դրժաղանատերերը մեզ չեն
կարող հաղթել:

ԱՄԱՌ

Այնու ե: Կարծես կրակ ե բարձրանում
դեմնի յերեսից և հուրհրատում:

Վոչ շունն ե հաջում, վոչ ճրճին յերգում,
դորան ել ե լույ, ել չի կրկնում:

Ամենքն ել փախել, հով տեղ են գտել,

իրենց բներում բույ, պապանձվել,

միայն մի հատիկ մարդ ե յերևում

խոր ընկած դաշտում, առվի յեղերքում:

Նանդնած ե մարդը արևի տակին,

մոտն ու ծունկը բաց, բահը իր ուսին,

մի շապիկ միայն ունի նա հագին,

և մի սպիտակ թասակ կա դիսին:

— Բայց ի՞նչ մարդ ե նա և ինչ ե շինում.

արևի տակին ինչո՞ւ յե ալրվում:

— Նա բոստանչի յե, բոստան ե ջրում,

սեխն ու ձմերուկը նա յե հասցնում:

Յերկու ընկերներ իրիկնապահին
հրացան առած՝ անտառ գնացին,
վոր մեկ բան վորսան,
չուտով յետ դառնան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ
ու կատաղությամբ նրանց վրա վազեց,
մեկն շտապելով ծառը բարձրացավ,
մյուսն անճարացած՝ գետնի վրա պառկեց,

չունչն իրեն քաշեց
ու անշարժ մնաց,
վոր արջը կարծե,
թե նա մեռած է:

Արջը մոռալով՝ մոտեցավ նրան,
ախանջը կամաց դրավ բերելի վրան,
ախանջ դրեց,
հոտ քաշեց,

վերջապես նրան մեռած կարծելով,
հեռացավ գնաց՝ դունչը լիցելով:
Փախած ընկերը ծառիցն իջավ ցած,
ընկերին հարցրեց, թե արջն ի՞նչ ասաց:

— Արջն ինձ պատվիրեց, վոր յետ
մյուս անգամ

քեզ պես մարդու հետ վորսի չգնամ,
վոր մեզ մի վտանգ-բան պատահելիս՝
մենակ չթողնես ու ինքդ վախճիս:

ՔԵՌԻ ԽԵՉԱՆԸ

— Բարի լիս ձեզ:

— Ա՛, բա՛րով, բարով, քեռի՛ խեչան: Աղջի՛, չայ
բերե՛ք, հաց բերե՛ք, արաղ բերե՛ք քեռի խեչանի համար:

Ե՛, խեռ լիլ, քեռի՛ խեչան, ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել,
վոր դու քաղաք ես յեկել:

— Ի՞նչ պետք ե պատահի. ձեր կարոտն եյինք քա-
չում: Ասի՛ մեռնել կա, ապրել կա, մի՛ գնանք տես-
նենք:

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, քեռի՛ խեչան:

Քեռի խեչանը դեռից դենից խոսելով թեյ խմեց,
հաց կերավ, վերջը լուեց ու սկսեց չիրուխ քաշել:

Մին ել չիրուխը բերնից հանեց թե՛

— Բա ես վո՞նց պրաի լիլ:

— Ի՞նչը, քեռի՛ խեչան:

— Ես, վոր երեխին սալդաթ են տանում:

— Չըդիտեմ... յես ի՞նչ կարող եմ անել...:

— Ել ինչը վո՞րն ա, հրեն քեռեկինդ նստած լաց ա
ըլում:

— Դե ասա՛, ինչ վոր կարող եմ անել,—պատրաստ
եմ:

— Ասում եմ՝ գնանք մի մետրիկեն հանենք, տես-
նենք՝ ի՞նչ ենք անում:

— Լա՛վ, համեցեք գնանք:

Գնացինք կոնսիստոր:

Դիվանապահին խնդրեցին՝ քեռի խեչանի ցույց տալով
թիվանի մետրիկական մատյանները հանեց, ման յե-
կանք, քրքրեցինք, քեռի խեչանի տղեն չկա:

— Եդ վո՞նց ա, ա՛խպեր:

— Դե չրկա ե՛լի, քեռի՛ խեչան:

— Հլա մի քանի տարի ել ցած մտիկ արե՛ք, կարե-
լի՛ յա սխալվել ենք:

Նոր մատյաններ բերինք, ման յեկանք, նրանց մեջ ել
չրկա:

— Մենք սխալվել ենք... անպատճառ սխալվել ենք
եյի, —կրկին խոսեց քեռի խեչանը: Յերեխեն իմ հաշվով
մեծ պետք ե ըլի: Մըթամ պետք ե ասեյի բարձր մտիկ
արեք, ցած եմ ասել:

— Լավ , քեռի՛ խեչան, բարձր ել մտիկ կանենք:

Նոր մատյաններ բերինք, նորից ման յեկանք: Դարձյալ չկա:

— Ձկա, քահանան գրել չի:

— Բառ ես վո՞նց պրտի ըլի:

— Դե վոր չկա՝ ի՞նչ անենք...: Գնանք, քեռի՛ խեջան:

— Գնալով վո՞նց կըլի...: Հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում:

— Դե ի՞նչ անենք, վոր չկա:

Դուքս յեկանք: Մի հիսուն քայլ գնացինք, քեռի խեջանը կանգնեց:

— Կա՛յ հրա:

— Ի՞նչ կա, քեռի՛ խեջան:

— Մըթամ ես ո՞ւր յեկանք, ո՛ւր ենք գնում:

— Մեր տունն ենք գնում, ե՛լի:

— Յետո եղ ելա՞վ, վոր...:

— Բա ի՞նչ անենք:

— Ախր ետեղից ետեղ, քու անունը տվել եմ յեկել, հիմի վոր գնամ՝ ի՞նչ խաբար տանեմ:

— Դե ի՛նչ անեմ, քեռի՛ խեջան, մատյաններն են եյին, ենքան տարի տեսանք, տակն ու վրա արինք—չկա:

— Վո՞նց թե չկա. են վոնց ա՝ ամենի տղեն ել կա, հենց ի՛մը չկա...:

— Դե վոր եղպես ե՝ ի՛նչ անենք:

Քեռի խեջանը մինչև տուն բան չխոսեց:

— Հը՞, ինչ արիք, հարցրեց կինս:

— Դեռ հալա տեսներ, — պատասխանեց քեռի խեջանը:

— Ել ի՞նչ տեսներ, մատյանումը գրած չի, վերջացավ գնաց, — մեջ մտա յես:

Քեռի խեջանը տնքաց:

— Վերջացավ, վերջացավ, յես ել ինչ ճամբով յեկել եմ, են ճամբովն ել յետ կերթամ մեր տունը, — վճռեց ու վշտացած նստեց, սկսեց չիբիխն զոռ տալ:

Ճաշի ժամանակն յեկավ: Լուռ նստած ճաշում ե-

յինք. հանկարծ քեռի խեջանը ճաշն բնդ հատեց ու ինձ գլմեց.

— Բառ յես վոր հիմի գնամ՝ քեռեկինդը ի՞նչ ա-

սեմ:

— Ընչի՞ համար:

— Ես մետրիքականի:

— Վա՛հ, չկա, չկա, քեռի՛ խեջան. տերտերը գրել չի, չկա:

— Ե՛, դե ասում ես, ե՛լի:

— Ի՞նչպես թե՛ ասում ես, ելի. քեզ ասում են—

չկա:

Քեռի խեջանը դարձյալ տնքաց ու չիբուխը սարքեց: Ճաշից հետո մտա իմ առանձնատանյակ, վոր հանգըստանամ: Մտածում եյի, թե ի՛նչ տեսակ մարդ են մեր գյուղացիք...:

Մին ել տեսեմ՝ ներս մտավ քեռի խեջանը:

— Քնո՞ւմ ես:

— Հա՛:

— Բա ես քեզու ժամանակ ա՞:

— Բա՛ ինչ անեմ, քեռի՛ խեջան:

— Ախր յես յեկա, ետեղ մնացի, բա ի՞նչ ես ա-

նում:

— Ի՞նչ անեմ, քեռի՛ խեջան:

— Ես մետրիկի համար բա ի՞նչ ես ասում:

— Վա՛հ, դարձանալի մարդ ես, ա՛յ մարդ, քեզ հայերեն ասում են՝ չկա՛, չկա՛, քեռի՛ խեջան:

— Դե լավ, լավ, ե՛լ ի՞նչ ես նեղանում, չկա, յես ել կգնամ մեր տունը: Մնաք բարով: — Ու քրթմնջալով դուրս գնաց:

— Գնաս բարով. դե ինչ անեմ, վոր չկա:

— Վեր կացա, տեսեմ՝ քեռի խեջանը պառչգամբում նստած չիբուխ ե քաշում: Գլխարկս վերցրի, վոր տանիցը դուրս գամ:

— Եղ ո՞ւր ես գնում, — յետեիցս կանչեց քեռի խեջանը, — բա ի՞նչ ես ասում...:

- Բան չեմ ասում:
- Գնո՞ւմ ես...:
- Հա':
- Ել մետրիկեն չես տեսնի՞ր...:
- Ձե', չեմ կարող:

Ես պատմությանից հետո քեռի Խեչանը գնացել եր, գյուղումը պատմել, թե իր տեղը նեղ եր, յեկել եր քաղաք՝ ինձ խնդրել, վոր ոգնեմ, իսկ յես ասել եյի՝ չեմ կարող, ու վորչ նրա խոսքին եյի ականջ դրել, վորչ յերեսին եյի մտիկ արել:

ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

Արե բացվեց թուխ ամպերեն,
կաքավ թռալ կանաչ սարեն,
կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարե բերավ ծաղիկներեն.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղիկներով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լցված ցող ու շաղով.
Քնես-կենես յերգ ու տաղով.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Քո թե փափուկ ու խառտուտիկ,
Պզտիկ կաուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կշորորաս ճուտիկներով.

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

Յերբ կկանգնես մամոռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,
Սարեր ձորեր զվարթ կանես,
Դարդի ծովից սիրտ կհանես.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ:

ԳԵԼԸ

— Գելը վոչ մի բանից ենպես չի վախենալ, ինչպես կրակից, — խոսեց իմ տանտերը՝ քեռի Անդրեասը:
Մեր կողմերը, դե գլտեք, վոր գել չատ կա: Ենպես տեղ ունենք, վոր հենց գելի բուն ե, վոր կա: Մի մեծ ծմակ ունենք, Մոտկորա ծմակ ենք ասում: Եդ ծմակում մի բացատ կա: Եդ բացատումը ենքան գել կա, վոր անունը դրել են Գիլի բացատ:

Մի ձմեռնամուտ իրիկուն սարի գոմերիցը տուն եմ գալիս: Հակառակին ել Ստեփան տղես ել հետո ե. ինքնատառ տարեկան յերեխա յե: Վոր յեկանք եդ բացատի դիմացը, մի շան ձեն ընկավ ականջովս: Ասի՝ ո՞վ գիտի, վոչխար են բերել ես կողմերը, չորանի չունն ե հաջում: Ձեն տվի.

— Ա՛յ չորան, հե՛յ...

Շան հաջոցը կտրեց ու, ձեզ մատաղ, մին ել են տեսնեմ եդ ծմակիցը դեպի տուտը բաց ելավ, ուխները բաց արած գալիս են, վոնց են գալի՛ս: Աչքերս սևացան...

Դու մի ասի՛ր՝ հաչոգը գել ե յեղել: Ախր չե՞ վոր գելը վոռնում ե, շանից հաչել ե սովորում ու շատ անգամ ել հաչում ե:

Ձեռիս թվանք կար, միայն լավ գիտեմ, վոր գիլի բուռլի (վոհմակի) վրա թվանք չեն պցիլ. թվանք պցես թե չե, ամբի կատաղի վրա կտան:

Յերեխեն թե՛ տղի՛, են ի՞նչ են:

Ասի՛ր՝ վախիլ մի՛, քեզ մատաղ, զոչա՛ղ կաց: Արի

ողնի՝ ես խաչամն (չոր տերեւ) ու չոր ճյուղերը հավա-
քենք: Չորս կողմից խաչամն ու չոր ճյուղերը ձեռաց



կիտեցի ու կրակ տվի: Բոցը ծուլ ելավ: Մոտկորա ծմա-
կը լիքը փե՛տ: Մինչև սրանց հասնելը՝ վրա տվի, թեժ
արի, բոցն ելավ ծառերի ծերը:

Սրանք յեկել են, ինչքա՛ն են յեկել: չորս կողմերն
կտրել են, հեռու կանգնոտել, ժնդժնդում են ու ատամ-
ները չըխկչըխկացնում: Աչքները ծմակի մթան մեջ քու-
քուրթի (ծծումբի) բոցի նման ջուխտ-ջուխտ վառվում
են: Մարդ մտիկ անելիս դարզանդում է:

Յերեխեն կպել է փեշիցս ու լաց է լինում:

— Վախիլ մի՛, Ստեփա՛ն ջան, վախիլ մի՛, յես ես-
տեղ եմ... Լաց մի՛ ըլի, վոր չլաց ըլես, կզան՝ մեզ կու-
տեն...

Յերեխեն ձենը փորն է գցել ու փեշիցս կպած, դո-
ղում է, վո՛նց է դողում... Ի՞նչ անեմ: Հույսս դրել եմ
կրակի վրա: Փետը հատնում է, յերեխեն ել փեշիցս
պինդ բռնել է, թողնում չի՝ մի քիչ հեռանամ, փետ բե-
րեմ, կրակին վրա տամ:

Մոտիկ մի ցրցչորի ծառ կար: Կրակը բոթեցի սրա
տակը, սրա կողքին ել մի կտրած ծառի չոր բլուլ (կա-
տար) կար, են ել քաշեցի վրեն, թեժացավ, վոնց թե-
ժացա՛վ: Կարմիր լուսն բնկել է ամբողջ ձորը:

Դիմացի սարիցը չորանները նկատում են վոր, ախ-
պեր, ես ձորումը ես ժամանակին ես ի՛նչ կրակ պետք է
լինի, վոր քիչ է մնում՝ ծմակը կրակի:

Մտածում են, մտածում ու ձեն են տալի:

Ականջ դնեմ, վոր ես մեր Շամրի ձենն է:

Ուրախացանք:

Ձեն տվի:

— Շամի՛ր, հե՛յ... գիլի բոյուկ է. չորս կողմս
կտրել են... յերեխեն հետս ե... ողնեցե՛ք, հե՛յ...

Հենց ես կանչելն եր: Մի քանի չորան իրար հետ
ձեն տվին:

— Վախիլ մի՛ք, վախիլ մի՛ք, գալիս ենք, հե՛յ...

Ու պարզ լսում ենք՝ վո՛նց են իրար ձեն տալիս, չտա-
պեցնում, վո՛նց են չներին կանչո՛ւմ:

— Թորլան, հե՛յ, Ղայթար, հե՛յ, Չամբար, հե՛յ,
Չալակ, հե՛յ...

Շների կլանչոցը վեր ելավ:

Շատեղ երեխեն նորից սկսեց հեկեկալ ու լաց լսիլ:

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛. հըրես կգան:

Տղերք, ես մեր Շամրին Թորլան անունով մի գեղ-խեղդող չուն ունեք: Մին ել տեսա՝ ես շան ձենը մոտիկ ծմակում գրնդաց: Սրա յետևից՝ մնացած չները, չների յետևից կըրնկակոխ չորանները: Մին ել Ստեփանս թե՛ «ապի՛, գելերը փախչում են»:

Ասավ, ու ուրախությունը խառնվեց սարսափին: Միսեց աղաղակել ու առաջն ընկած փետի կտոր, քար, հող չպրտել գելերի յետևից:

Ել գելն ո՞վ կտա: Ծմակի մթնումը կտրան, գնացին: Տղերքն յեկան:

— Ա՛յ տղա, ես ի՞նչ բան եր:

— Բանն ել վո՞րն ե, ձեր տունը չքանդվի, հապա եսպե՛ս, եսպե՛ս...

Շատեղից վեր կացանք, գնացինք չորանների մոտ: Մինչև լուսացալ, առավոտը խմրով յեկանք տուն:

Ես բանն, ախպե՛ր, իմ գլուխն յեկավ: Կրակը մեզ ազատեց, — վերջացրեց խոսքը քեռի Անդրեասը:

2

— Գիտեմ վոչ՝ Շորադյալ յեղե՞լ եք, թե՞ չե: Հոգում անունով մի գեղ կա. եղ գեղիցը դուրս ենք յեկել, դա-լիս ենք դեպի Արթիկ: Յեկանք, ճամրին մութն ընկավ: Ծնկնահար ձյուն, ցուրտն ել հո՞, թրի նման մարդի յե-րես ե կտրատում: Ճամրեն ել լավ չգիտենք: Գնա, թե պետք ե հասնես Հոգոմ:

Ես մեր Դավիթն առաջին եր գնում: Մին ել թե՛ տղե՛ք, յեկեք, վոր գեղը գտել եմ:

— Ա՛յ տղա, ո՞ւր ե:

— Թե՛ հրե՛ն ճրագները յերևում են:

Մտիկ տանք՝ տեսնենք, ճամարիտ վոր, հեռվում շատ ճրագներ են յերևում: Միայն յիս նկատում եմ, վոր ես ճրագները ժաժ են դալի, դես-դեն են գնում:

Ասի՛ տղե՛ք:

Թե՛ ի՞նչ ե:

Ասի՛ ես գեղ չի: Մին, վոր ձմեռը սրանց գեղերի տները դուռն ու կտուրը փակ, ճրագները չեն յերևալ, մին ել վոր՝ ես ճրագները վոր տեսնում եք, ման են դալի:

Թե՛ բա ես ի՞նչ են:

Ասի՛ գելեր են: Գիլի բոլուկի բերան ենք ընկել, պատրաստվեցե՛ք: Յես լսել եմ, վոր դուռնի ձենին գելը մոտ չի դալի: Զուռնա դհուլը սարքեցե՛ք: Ես խոսքումն ենք, տեսնենք՝ ճրագները մոտենում են, մթնումը, ձնոտ դաշտումը դես ու դեն վազում են, ցրվում են, ու-դում են մեզ շրջապատեն: Ննքա՛ն են, ենքա՛ն են, վոր ել հաշիվ չկա:

Յես ու Ակորը դուռնեն զլեցինք, ես Դավիթն ել դհուլը—դըմբ հա դըմբ, կես գիշերին, ես վերանա դաշ-տումն ածում ենք: Զուռնա-դհուլի ձենը վեր յեղավ թե չե, ես գելերս, վոնց վոր տեղն ու տեղը մեխես, մնա-ցին իրենց տեղերը մեխված:

Մին ել վոռնոց վեր քաշեցին: Զուռնի հետ ձեն-ձենի յեն տվել, վոռնում են:

— Վա՛յ,—ես ու են կողմից բացականչեցին գյու-ղացիք:—Ուստա՛ Սարգիս, լավ ե՛ ծիծաղներդ դալիս չեք:

— Ա՛յ տղա, ի՞նչ ծիծաղ կդար, սիրտներս սեա-ցել եր. դանակ տայի՛ր՝ արյուն չեր կաթիլ:

— Հետո՞, հետո՞...

— Հետո մենք ճամբա ընկանք, սրանք ել մեզ հետ: Մենք ածելով դալիս ենք, սրանք ել չորս կողմերս կրա-րած, հետո մթնումը ցինդիր-ցինդիր անելով դալիս են: Կարծես պար են դալիս: Գլուխներդ ինչ ցավեցնեմ. ես-պես գնալով՝ գիշերվա մի ժամանակը առաջներս մի շան հաչոցի ձեն լսեցինք: Ես հաչոցի վրա մի քանի չներ սկսեցին հաչել ու վոռնալ, ու մին ել տեսնենք՝ մոտիկ

գեղի ճրագները դուռը դուրս յեկան: Մարդկանց ձենը հասնում է մեզ:

Քանի գեղին մոտենում ենք, գելերը յետ են ընկնում: Վերջապես հասանք գեղին. սրանք յետ դառան, կորան:

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ յեկան—մնացին դարմացած: Տեսնում են —յերկու զուռնաչի ու մի դհուլչի անկողի՝ դալիս են, ու հեաները հարսանքավոր չկա:

— Ա՛յ ուստեք, բա հարսանքավորները վո՞րտեղ են:

Ասում ենք՝ հարսանքավորները յետ դառան, գնացին: Զուռնեցին ձեր գեղը մտնեն:

— Եդ ո՞վ կլինի վոր...

— Գելերը...

— Վո՞նց թե գելերը...

— Ա՛խպեր, ասինք, պատմելու ժամանակը չի, ցրտատար ելանք, մեռնում ենք, մեզ մի տաք տուն տաքեք, ենտեղ կպատմենք:

Տարան մի տաք ողա, բուխարին թեժ արին, հաց դրին առաջներս, գլխներին հավաքվեցին եսպես, ինչպես վոր մենք հավաքվել ենք, ու սկսեցինք պատմել: Պատմում ենք ու ծիծաղում, պատմում ենք ու ծիծաղում:

Վերջն ել իմանանք, վոր են գեղը չենք յեկել, վորտեղ գալիս եյինք, ճամբեն կորցրել ենք—ընկել ենք Պարնի գեղ:

ՀՍԿԱՆ

Լավ չե՛մ հիշում, թե վոր դարում,
Հին ժամանակ մեր աշխարհում,
Ասում են, թե կար մի իշխան.
Մի մեծ իշխան՝ ենքան ուժեղ,
Վոր թե մարդիկ նրա աչքում
Թե հասարակ ճանճ ու մեծեղ:



Ինչ վոր աներ ու կամենար,
Որենք եր են յերկրի համար.
Ո՞վ եր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կգար նրա դիմաց:

Ուներ անթիվ ու անքանակ
Վոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլուկ,
Յերամակներ ձիու, ջորու,
Ես բոլորը ցրված, փռված
Մինչև ծովի ափը հեռու:

Մինչև ուր վոր քեր, տաներ,
Իր աշխարհի սահմանն են եր.
Ո՞վ եր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կգար նրա դիմաց:

Մի անգամ ել ես իշխաներ
Յերբ նստած եր իրեն տանը,
Լեղասպատառ ներս ընկավ առն,
Իր հոտերի վերակացուն.

— Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա՛հ եսպես հրաշք մի բան.

Արածում եր ծովի ափին
Բազմությունը քու հոտերի,
Մին եյ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ ե գայի:

Մի վիթխարի մարդ եմ ասում,
Վոր մենք իր մոտ լու յենք չնչին:

Ծովը մինչև ծունկն ե հասնում,
Իսկ գլուխը՝ ամալի միջին:

Յեկավ, կանդենց մեր հանդիման
Ու փորտաց ամալի նրման.

«Ո՞վ ե, ասա՛վ, եսպես ըերում,
Թողնում ապրանքն իմ հանդերում.

Կորե՛ք իսկույն, դուք մարդուկներ,
Ձեռքս քանի չի հասել դեռ...»:

Ես ժամանակ վեր կացա յես

Ու սրտասոխան տվի եսպես.

«Եդ սեակնած, մութ ամպերում,

Ձուր ես եղբան բարձր դոռում,

Ով ել լինես, ուսկից ել գաս,

Ես մի բանը լավ խմանաս,

Դո՛ւ, յերկնահաս, ահեղ հսկա՛,

Մեծ իշխանի ապրանքն ե սա.

Ո՞վ ե գլխից ձեռ վեր կալած,

Ո՞վ դուրս կգա նրա դիմաց»:

Բայց ինձ իսկի չլսեց ել

Են անճոռնի աթգահակը,

Են ամպերից ցած կռադավ,

Ձեռը կոխեց ծովի տակը,

Դուրս հանեց մի ձուկն ահագին

Ու դեմ արավ արեգակին,

Վոր խորովի...»:

Հազիվ եսքան

Պատմեց հովիվն իշխանական

Ու վեր ընկավ, շունչը փչեց:

Խիստ զայրացավ իշխանը մեծ.

— Ո՞վ ե, սոսա՛վ, համարձակվել

Իմ տերության սահմանն յեկել

Ու եղպես ել վրես հաչում...

Ինձնից ուժեղ չեմ ճանաչում

Յես փոչ մի տեղ ու վոչ մեկին...»

Եսպես ասավ ու զայրագին

Հրամայեց՝ զորքերը գան:

Հրամայեց՝ զորքերն յեկան.

— Կեցցե՛ մեր տեր, մեր թագավոր,

Անհաղթ, անմահ, ամենագոր...:

— Ապրե՛ք, ասավ իշխանը սեզ,

Յելեք իսկույն ու դնացեք,

Մանուկ ու ծեր

Իմ առյուծներ,

Ո՞վ ե, տեսե՛ք, վրբես հաչում

Ու իմ ուժը չի ճանաչում:
 Յույց տվեք դուք, վոր վոչ մի տեղ
 Զկա վոչ վոք ինձնից ուժեղ...:
 Ասավ, դորքերն իրենց կարգին
 Փող փչեցին, թմբուկ զարկին,
 Շրջըխկոցով, զըրընգոցով
 Ճամբա ընկան դեպի մեծ ծով:
 Հասան, տեսան—ա՛յ քեզ հսկա,
 Գլուխն եստեղ, վոտներ չկա.
 Գնա՛, գնա՛, թե վոր գտնես...:
 Յերկար ու մին ձգված եսպես,
 Հսկայական քնով քնած:
 Եստեղ, ենտեղ դիրքեր բռնած,
 Դես չոքեցին, դեն պառկեցին.
 Հա՛ զարկեցին ու զարկեցին.
 Տեսան՝ տեղից ժաժ չի գալի,
 Խըռմփում ե զարհուրելի,
 Խըռմփոցից, ինչ վոր խոսում,
 Մարդիկ իրար ձեն չեն լսում:
 Մոռ գնացին, ելի՛, ելի՛...:
 Դարձյալ տեղից ժաժ չի գալի:
 Կամաց—կամաց սիրտ առնելով,
 Գոռգոռալով, հարայ տալով.
 Դուրս թափվեցին թագուստներեն,
 Վրա տվին, յեւան վրեն,
 Վորը վոտին,
 Վորը քթին,
 Վորը լանջին,
 Վորն ականջին,
 Փորի վրա, միրքի միջում,
 Զի յեն քչում, նիդակ ճոճում,
 Զարկում, զարկում,
 Զգում, թքում.
 Հայհոյում են եսպես, ենպես...:
 Մին ել հսկան են սարի պես

Վրա նստեց մեծ, ահարկու:
 Ինչ պատահեց՝ վոչ տեսնես դու.
 Հաղարներով մարդն ու իր ձին
 Տակովն յեղան, կոտորվեցին.
 Վորն ել գլխից, քթից, լանջից,
 Կամ ուսերից, կամ ականջից
 Ներքե ընկավ—թե մարդ, թե ձի,
 Նրա որն ել դու իմացի:
 Շատ զարմացավ հրեշ—հսկան,
 Թե, Տե՛ր Աստված, արդյոք եսքան
 Մանր—մունր ի՞նչ բաներ են,
 Վոր յեկել են թափվել վրեն:
 Տեսավ՝ ինչ վոր կենդանի կան
 Վաղ են տալի թե յետ գնան,
 Բուռն արավ իր բռնովը մեծ,
 Իրար խառնեց, վողջ հավաքեց,
 Գրպանն ածավ
 Ու վե՞ր կացավ,
 Լընդլընդալեն իրիկունը
 Դընաց հասավ իրենց տունը,
 Տանը իր պես մեծ, ահագին
 Մի մեր ուներ, բարի մի կլինի
 Գնաց, հսկա մորը պատմեց,
 Թե իրեն հետ ի՞նչ պատահեց:
 Ու գրպանից հանեց բոլոր
 Ահից խելառ ձին—ձիավոր:
 Բարի կինը հենց վոր տեսավ,
 — Ամա՛ն, վորդի՛, վա՛յ ինձ, ասավ,
 Ի՞նչ ես անում եղ խեղճերին,
 Բա չե՞ս տեսնում, թե քու ձեռին
 Վոնց են դողում: Ասենք մեծ ես,
 Մի՞թե պիտի վոքրին տանջես:
 Մեծ թե փոքր, ինչ ել լինի,
 Ամեն ապրող շունչ կենդանի,
 Վոր ծնվել ե արևի տակ,

Ես աշխարհում միատեսակ,
 Մինը պակաս, մյուսը ավել,
 Վողջ եյ գիտեն խնդալ, ցավել:
 Չպարծենալ յերեք վոչ վոք,
 Թե ինքն անհաղթ մի բան ե ջուկ,
 Միշտ ուժեղից ուժեղը կա,
 Իսկ ամենից ուժեղը—մահ...
 Բա՛ց թող, վորդիւ, բա՛ց թող՝ գնան,
 Ապրեն ազատ՝ ուր կամենան:

Ու հնազանդ մոր խրատին՝
 Իսկույն հանեց հսկա վորդին
 Իր գրպանից ձին—ձիավոր,
 Իրար խառնած գորքը բոլոր
 Թողեց գնան,
 Ուր կամենան:

Ու, աղաւթած նրա ձեռից
 Չինժոռները են աշխարհից
 Փախան թափով զարհուրելի:
 Ո՞ւր ես, իշխան, քեզ ենք գալի:
 Դիշեր—ցերեկ, անհաց, անբուն,
 Յեկան, հառան վերջապես տուն.
 —Հապա՛, իշխա՛ն,

Ես տեսակ բան...
 Բայց իշխանը հոժարակամ
 Չուղեց յսի մինչև անգամ,
 Թե իրենից ուժեղ հսկա
 Ես աշխարհում ուրիշը կա:
 Նորից արա՛յ գորածողով
 Ու ինքն անձամբ, յերգով, փողով,
 Դրոշակով իշխանական,
 Ճամբա յելա՛յ դեպի հսկան:
 Գնա՛ց, գնա՛ց, գնաց հասա՛յ.
 Ու վիթխարին մին ել տեսա՛յ՝
 Էն եր թողած մանրերն ահա
 Կրկին յեկան իրեն վրա:

Ձի յեն քշում,
 Մոտ են գալի,
 Թուր են քաշում
 Հարայ տալի,
 Նետեր ձգում
 Ու ծակծկում...:
 Խիստ բարկացա՛լ ետեղ հրսեան,
 Ու ցասումով հսկայական
 Մի ահագին սար առա՛յ մեծ,
 Մինչև յերկինք վեր բարձրացրեց,
 Վոր անհամար զորքն իշխանի
 Միանգամից տակովն անի...:

ՍՈՒՏԼԻԿ ՎՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի
 որ հինգ ու վեց հոգով, թրով—թվանքով վորսի զնա-
 ցինք: Հաղին եր, Հուգին եր, Չատին եր, Մատին եր,
 Հերս եր, յես եյի, գնացինք վորսի...:

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝
 սուս ու փուս գնացինք, վորտեղ ահ եր՝ կուզ ու կուզ
 գնացինք... Գնացի՛նք, գնացի՛նք, շատ թե՛ քիչ, մին
 ել տեսանք յերեք լիճ. յերկուսը ցամաք, մընի մեջն
 ել իսկի ջուր չկա: Մին ել, ըհը՛, մտիկ տանք, վոր ես
 անջուր լճում լողում են, ճշում յերեք հատ սպիտակ
 բադ—յերկուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հյուգի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Թե՛ հրացան չունեմ:

— Հաղի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

— Թե յես ել չունեմ:

— Չատի՛... Մատի՛...:

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...:

Հորս ձեռին կարճ ու յերկար, հաստ ու բարակ,
մի փայտ կար, յերեսն առավ, նշան դրեց, մին եւ՝
տրա՛ք, վոր կրակեց...նա կրակեց, յես դարկեցի, վոր
դարկեցի՝ փովեց եսպես—ամեն թեւը հինդ զազ ու կես...:

— Հադի՛, դանա՛կ...

— Թե՛ դանակ չունեմ:

— Հյուդի՛, դու...

— Յես ել չունեմ:

— Չատի՞, Մատի՞...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի:

Ես անբերան դանակը քաշեցինք: Հադին մորթեց,
չկարաց. Հուդին մորթեց, չկարաց, Չատին չկարաց,
Մատին չկարաց, հերս ել չկարաց, յես քաշեցի՝ մոր-
թեցի: Մորթեցի, վեր գցեցի. բազմի ասիւ, մի դոմեշ
ասա: Հադին չալակեց, չկարաց, Հուդին չալակեց, չկա-
րաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց,
յես չալակեցի: Շալակեցի, գնացինք: Գնացինք, գնացինք,
հասանք մի տեղ, մին ել տեսնենք յերեք գեղ—յերկուսի
տեղն իսկի չի յերեւում, մընումն ել իսկի չենլիկ չկա:
Ես անշեն գեղումը դես ման յեկանք, դեն ման յեկանք,
մի տուն գտանք, մեջը յերեք պառավ, յերկուսը մեռած,
մընի բերնումն ել չունչ չկա: Տղե՛րք, ասինք, յեկեք բա-
դով փխով անենք: Ես անշունչ պառավը գնաց,
դես ման յեկավ, դեն ման յեկավ, կես բրինձ գտավ, յերեք
սղիւնձ՝ յերկուսը ծակ, մինն ել իսկի տակ չունի: Չուրը
չցրինք ես անտակ սղիւնձը, մեջն ածեցինք բազն ու բրին-
ձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց, միան ու բրինձը
գնացին, մնաց ջուրը:

Վորսից յեկած սոված մարդի՛կ, վրա յեկանք,
կերա՛նք, կերա՛նք. վոչ աչքերս բան տեսավ, վոչ բե-
րաններս բան մտավ:

Լինում ե մի սար,

Են սարում մի ծառ,

Են ծառում փչակ,

Փչակում մի բուն,

Բընում յերեք ձագ,

Ու վըրեն՝ Կկուն:

— Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկունե՛ր,

Յե՛րբ պիտի դուք առնեք թևեր,

Թռչե՛ք, դնաք,

Ու բախանաք...

Շերդում եր մարիկ Կկուն.

Մին ել, ըհ՛ը, Աղվեսն յեկավ:

— Ես սարը իմն ե,

Ես ծառը իմն ե,

Ծառում փչակ կա,

Փչակում մի բուն,

Ես ո՞վ ե յեկել

Տիրացել թագուն:

Ախ դու Կկու, հիմար Կկու,

Դանի՞ փոքրիկ ձագ ունես դու:

— Յերեք հատ ձագ, աղա՛ Աղվես:

— Յերեք հատ ձագ ցույց կտամ քեղ:

Ու չե՞ս ասել, դո՛ւ, անամոթ,

Մինը ծառա դրկես ինձ մոտ:

Ձգի չուտով մի հատը ցած,

Թե չե՛ կացինս հրեն սրած,

Գընամ բերեմ,

Ծառը կտրեմ...

— Վա՛յ, չկտրես,

Աստված սիրես,

Ես մինն ահա

Տար քեղ ծառա

Միայն թե եղպես

Մի ջնջիլ մեզ
Բնով-տեղով,
Ամբողջ ցեղով:
Խնդրեց մարիկ Կիուն ու ձագերից մինը
ձգեց ներքև: Աղվեսը հա՛փ, առավ դնաց:

—Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
Իմ լավ կուկու...
Վո՞ր սև սարում,
Վո՞ր անտառում,
Վո՞ր թփի տակ
Կորար մենակ...
Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...

Լաց եր լինում մարիկ Կիուն, մին ել,
ըհ՛ը՛, Աղվեսը յետ յեկավ:

—Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե,
Ծառում փչակ կա,
Փչակում մի բուն,
Ես ո՞վ ե յեկել,
Տիրացել թաղուն:

Ս'իս, դու Կիու, հիմա՛ր Կիու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
—Յերկու հատ ձագ, աղա՛ Աղվես:
—Յերկու հատ ձագ ցույց կտամ քեզ:

Ս'իս, չարամիտ դու ավաղակ,
Ինչ խաբար ե, յերկո՛ւ հատ ձագ.
Ի՛նչ, ուզում ես եստեղ զոռով
Լսնես ամբողջ կիուններո՞վ...

Ձգի շուտով մի հատը ցած,
Թե չե՛ կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...

—Վա՛յ, չկտրես,
Աստված սիրես,
Ես ել առ տա՛ր,

Ու թող դադար՝
Վերջինը գեթ
Մընա ինձ հետ...

Աղաչեց մարիկ Կիուն ու յերկրորդ ձագն
ել ձգեց ներքև: Աղվեսը հա՛փ, ես ել առավ ու
դնաց:

—Վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ,
Ընչե՞ համար
Յեկա ես սար,
Բուն չինեցի,
Ձագ հանեցի...
Աղվեսն յեկավ,
Տարավ կերավ
Յերկու, յերկու,
Կուկու... կուկու...

Լաց եր լինում մարիկ Կիուն:
Ես միջոցին—դա՛, դա՛, դա՛, Ագռավն անց
եր կենում են կողմերով: Լսեց Կիվի լացի ձայնը:

—Եղպես տխուր ու դարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, Կիո՛ւ քուրիկ:
— Ի՞նչպես չլամ, ա՛ սանամեր.
Աղվեսն յեկավ են սրտամեռ,
Գլխիս եսպես փորձանք բերավ,
Ձագուկներս տարավ կերավ:
—Վո՛ւյ, իմ աչքին, անխելք Կիու,
Ի՛նչպես իզուր խաբվել յես դու
Սուտ խոսքերից չար Աղվեսի:
Վո՛ւյ թե սարը իմն ե՛ կասի:
Ո՞վ ե տրվել են լրբին սար,
Սարն ամենքինս ե հավատար...
Ո՞վ կթողնի՞ վեր կենա նա,
Ամբողջ սարին գա տիրանա,
Անունը տա սրած կացնի,
Սրան, նրան սուտ վախեցնի,
Ու մին ետը, մյուսը յերեկ,
Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...

Սև գրողի են տարածին
Ո՞վ ե տվել սրած կացին:
Մին ել վոր դա ու սպառնա,
Մի՛ վախենա, քչի գնա:
Եսպես ասավ Ագոավն ու Թռավ գնաց:
Ահա կրկին Աղվեսն յեկավ:

— Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե...
Հաղիվ եր ասել, Կիոն բնից գլուխը հանեց՝
Սուտ ես ասում, դու, խաբեբա՛,
Սնխիղճ գաղան, անկուշտ, ազահ:
Ո՞վ ե տվել եստեղ քեզ սար,
Սարն ամեն քինս ե հալասար:
Ինչ ես յեկել սուտ տեր դարձել,
Յես ել հիմար՝ ճիշտ եմ կարծել,
Ձագուկներս տվել եմ քեզ...
Կորի՛, գնա՛, դու չար Աղվես՛ս,
Հեղի՛ք ինչքան սուտ ես ասել,
Հիմի գիտեմ, չեմ վախում ել.
Կացին հունես՝ ծառը կտրես:
— Ո՞վ ասավ քեզ:
— Ագոավն ասավ:
— Ագոավը. լա՛վ:

Ու Ագոավի վրա բարկացած Աղվեսը պոչը
քաշեց, հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմեռ-
նուկի տվավ, վեր ընկավ, իբրև թե սատկել ե:
Ագոավն ել կարծեց՝ իրավ սատկել ե. Թռավ, յե-
կավ, վրեն իջավ, վոր աչքերը հանի: Աղվեսը
հա՛փ, հանկարծ բռնեց:

— Ղա՛-ղա՛, զա՛-ղա՛,
Աղվես աղա...
— Ա՛յ դու կռավան չարախոհու,
Վո՞նց թե Կիվին ասել ես դու,
Թե յես կացին հունեմ սրած...
Կացին հունեմ... դե հիմի կա՛ց...

— Վա՛յ, քեզ մեղա,
Աղվես աղա,
Յես եմ ասել, չեմ ուրանում,
Ինձ քրքրերի, ինձ կեր հում-հում,
Տուր՝ ինչ պատիժ սիրտդ կուզի,
Բայց մի վերջին խոսքս լսի:
Յես են սարում, հենց դեմ ու դեմ,
Ենպես մի թանկ պահուստ ունեմ,
Վոր չես գտնի դու քո որում
Վոչ մի թառում կամ անտառում:
Ընչի՞ համար են ահագին
Գանձը կորչի հողի տակին:
Արի գնանք, հանեմ տամ քեզ,
Ենքան ուտե՛ս, ենքան ուտե՛ս...
Թե չլինի ու սուտ դուրս գամ,
Յես հո եստեղ միշտ կամ ու կամ...:
— Գնա՛նք, ասավ Աղվեսը: Թե կլինի,
չատ լավ, թե չի լինի, ելի քեզ կուտեմ:

Գնացին:
Վերևից Թռչեյիս Ագոավը նկատել եր, վոր
մի թփում պառկած եր դյուզացու շունը: Աղ-
վեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ են
թփի վրա:

— Ա՛յ, ասեց. ես թփումն ե իմ պահուստը:
Աղվեսն ազահ վրա ընկավ թփին. շունը
վեր Թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին:
Աղվեսը խեղդվելով սկսեց խրխուլ.

— Ա՛խ, յես... ա՛խ, յես...
Ձգույշ Աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ եսպե՛ս...
Ա՛խ, անիրավ
Դու սե Ագոավ...:
— Ինչքան ել վոր լինիս զգույշ,

Չարի համար թե վաղ, թե ուշ,
եղ է պահված, Աղվե՛ս աղա.

Ղա՛, զա՛, զա՛, զա՛...

Պատասխանեց Ագուստին ու թռաւ:

ՄԱՅՐԸ

Մի գարնան իրիկուն դռանը նստած գրույց էյինք ա-
նում, յերբ այս դեպքը պատահեց: Յեւ վայս դեպքից
հետո յես չեմ մոռանում են գարնան իրիկունը:

Ծիծեռնակը բուն եր շինել մեր սրահի ոճորքում:
Ամեն տարի աշնանը գնում եր, գարնանը յետ գալի, ու
նրա բունը միշտ կպած եր մեր սրահի ոճորքին:

Յեւ գարունն եր բացվում, և մեր սրահին էյին բաց-
վում, հենց վոր նա իր զվարթ ճիւղով հայտնվում եր մեր
գյուղում ու մեր կտուրի տակ:

Յեւ ի՛նչ քաղցր եր, յերբ առավոտները նա ծլրւում
եր մեր յերգին. կամ յերբ իրիկնապահներին իր ընկեր-
ների հետ չարվում էյին մի յերկար ձողի վրա ու «կար-
դում իրիկնաժամը»:

Յեւ ահա նորից գարնան հետ վերադարձել եր իր
բունը: Չու յեր ածել, ճուտ եր հանել, ու ամբողջ որը
ուրախ ճչալով թռչում, կերակուր եր բերում իր ճուտե-
րին:

Են իրիկունն ել, վոր ասում եմ, յեկով, կտցումը
կերակուր բերով ճուտերի համար: Ճուտերը ճվճվալով
դեղին կտուցները դուրս հանեցին բնից:

Եղ ժամանակ, ինչպես յեղով, նրանցից մինը, գու-
ցե ամենից անզգույշ կամ ամենից սովածը, շտապեց,
ալելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքե:

Մայրը ճչաց ու ցած թռաւ ճուտի յետեից: Բայց

հենց եղ վայրկյանին, վարտեղից վոր եր, դուրս պրծաւ
մեր կատուն, ճուտն առաւ ու փախաւ:

— Փի՛շտ, փի՛շտ, վեր թռանք ամենքս. իսկ ծիծեռ-
նակը սուր ծղրտալով ընկաւ կատվի յետեից՝ նրա շուր-
ջը թրթռալով ու կտցահարելով: Չեղաւ: Կատուն մտաւ
ամբարի տակը: Յեւ այս ամենն այնպես արագ կատար-
վեց, վոր անկարելի յեր մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտում եր ամբարի
շուրջը, իսկ մենք, յերեխաներս, մի մի փայտ առած
պտտում էյինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս յե-
կաւ ու փախաւ՝ դունչը լիղելով:

Ծիծեռնակը գատարկ կատվին վոր տեսաւ, մի զիւ
ծղրտաց ու թռաւ, իջաւ դիմացի ծառի ճյուղին: Այն-
տեղ լուռ վեր յեկաւ: Մին ել տեսանք՝ հանկարծ ցած
ընկա՛ւ մի քարի կտորի նման: Վազեցինք, տեսանք՝
մեռած ընկած ե ծառի տակին:

Մի գարնան իրիկուն եր, վոր այս դեպքը պատա-
հեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում
վո՛չ այս դեպքը, վո՛չ այն գարնան իրիկունը, յերբ յես
առաջին անգամ իմացա, վոր ծիծեռնակի մայրն ել մայր
ե ու սիրտն ել սիրտ ե, ինչպես մերը:

ԳԱՌԸ ՄԵՐ ՏԱԼԻՍ

Վերջացաւ արդեն վոչխարի կիթը,
կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.
Մեկն ել գդակը չարժելով ողում,
Դեռ գառնարածին՝ «հե՛յ յեկ» ե կանչում.
Յերկար չանցնելով, սարի գազաթին
Գառների կայտառ հոտը յերկաց.
Խառնվելով նրանք մայրերի հոտին,
Բերկրանքի հույզով մայր մ եմ ցրված.
Կանչում են, բայում գառն ու մաքին

Անուշ ձայներով փնտռում են միմյանց,
 Վորը գտնելով իրա գառնուկին,
 Մծել է տալիս, փայելով սրտանց.
 Վորը խաղում է մոր հետ կուշա փորով,
 Վորն էլ մնում է տխուր մայելով.
 Յեվ ամեն անգամ դառը մեր տալիս,
 Կարծես թե անուշ համերգ են տալիս:
 Յեվ շուտ ջոկելով մայրերը գառնից,
 'Հովիվը քչեց նրանց դեպ արոտ.
 Մահակն էլ ուսին գառները բինից
 Տարավ գառնսրած սառն աղբյուրի մոտ:

ՅԵՁԸ ՏԱՐԱՆ...

...Աչուհն անցավ, բարբարոս ձմեռը նորից բռնա-
 ցավ: Այս անգամ, սակայն, չքավոր Չատույի ցավը մի-
 այն ձմեռվա խստությունը չէր, այլ այն, վոր իր այնքան
 սիրած, իր միակ հույս ու ասլավեն խնձոր յեղը ձեռից
 գնում էր:

— Վա՛շ, ելի՛ կապիկեց բախոս,—ամեն անգամ
 դառնությամբ հիշում էր նա: Բայց այս դառնությունն
 ավելի թունավորվում էր պարտատիրոջ դժոխային պա-
 'հանջով:

— Փո՛ղս, փողս. թե չե համ յեղդ կխլեմ, 'համ ու-
 տելու հացդ, ու սոված կթողամ...

Յեվ, չնայելով Չատույի ու կնոջ աղաչանքներին,
 'մրմնջալի պաղատանքներին, այնուամենայնիվ լսվում
 էր նույն անողորմ և անարեկող ձայնը, թե՛

— Փո՛ղս, փողս:

— Աղա ջա՛ն, աղաչում ենք, յերկու շաբաթ էլ
 համբերի, բալբի մի տեղից ճարենք, տանք:

— Անկարելի՛ յա, փո՛ղս, եղուց ծեղին փո՛ղս...

Չատուն ու կինը 'հուսահատ, քաշվեցին իրենց ավերակ
 խրճիթը, վորի մի անկյունում խնձորն էր կապված:
 Այնտեղ նրանք մնացել էյին տրամած ու քարացած:

Ահա այս ցավերով համակված, մարդ ու կին ամբողջ
 դիշերն իրենց յեղբայր խնձորին հրաժեշտի համբույր-
 ներ տալով, անքուն աչքերով լուսացրին ու չգիտեյին,
 թե ի՛նչպես պիտի բաժանվեյին նրանից: Վորովհետեւ
 բաժանվել խնձորից՝ նշանակում էր դրկներից խլել իրենց
 յերեսան և աչքերի առաջ ջուրը նետել նրան:

Առավոտը լուսացավ: Տանուտերը, վաշխառուն և
 սրանց կամակատարները, մինը մտրակն առած, մյուս-
 ները՝ դադանակները, ավազակների նման դնում էյին
 դեպի ողան: Այն միջոցին Չատուն ամենածանր մտածո-
 ղության տակ դուրս յեկավ նրանց առաջ և վշտից խեղ-
 դվող ու ընդհատվող ձայնով սիրտ արավ մեկ էլ խնդրել,
 վոր խղճան իրան և միքանի որ ժամանակ տան՝ փողը
 ճարի: Բայց դարձյալ իզո՛ւր: Յեղը խիստ դուր էր յեկել
 աղային. նա վաղուց էր ասել, թե «են յեզն ամենեկն
 աղքատի յեղ չի, հարիր մանեթ նաղդ փող արժի, ճանկս
 եմ դցելու»: Ու մերժեց:

Չատույի հույսի այս վերջին թեյն էլ կտրվեց: Այնու-
 'հետեւ աննկարագրելի յեր նրա վիշտը: Ավաղակախում-
 բը, յերբ ներս մտավ յեղը դուրս անելու, Չատուն ու կինն
 ամբողջապես արտասուքի հեղեղ դարձած փաթաթվեցին
 իրենց յեղբորը և համբույրներով հեղեղեցին նրան ևս:

Իսկ յեկողները թոկը յետ արին սյունից և յեղը
 դուրս քաշեցին ողայից, բայց կենդանին խրտնեց հան-
 կարծ և թե՛ տանուտերին ու թե՛ հափշտակողներին բա-
 'վական տեղ քաշ տվեց դուրս: Այստեղ Չատուն, համա-
 բյա ցնորմելու հափ շփոթմամբ դրության մեջ, միքանի
 վայրկյան կնոջ հետ միասին անհավասար դիմադրու-
 թյան փորձ արավ: Սակայն մտրակների և դադանակնե-
 րի հարվածները յետ մղեցին նրանց և յեղը քչեցին, տա-
 րան:

Իսկ Չատուն ու կինը, յեղբայրը Թաղած յեղբոր ու
քրոջ նման, կարծես դերեզմանատնից վերադարձան ու-
ղան, ուր ամբողջ որը դառն հեկեկանքներով անմխիթար
սգլի մատնվեցին:

ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Մուկըն ընկավ դռնեդուռ,
եւ չթողեց տուն-կառուր,
ջահել-ահել գեղովի,
ջոջերից ջուկ, տեղովի
կանչեց, բերեց ժողովի,
թե ի՞նչ անեն, վոր կառուկեն
մի հնարքով աղատվեն:
Յեկան գեղի ջոջերը,
յերկար-բարակ պոչերը,
մասնակցեցին խորհրդին.
մի մուկ խոսեց իր հերթին.
— Լսե՛ք, մկնե՛ր ցեղակից,
չունեմ վորդի, կողակից,
յես մի անտեր ծերուկ եմ,
բայց պատվավոր մի մուկ եմ.
պակսեց ուժը իմ վորտի,
պետք է մեռնեմ անոթի.
սովն ե չոքել դռանը.
ախ, այն կատուն՝ Մառանը,
ստից սատկում, տաղ անում,
մուկ ե տեսնում, վաղ անում,
բռնում գլխից, կախ անում,
թաթով տալիս խաղ անում,
ուտում, քեֆը չաղ անում:
Եսպես զուլում ու կրակ,

դեռ աչքերն եւ ջուխտ ճրագ.
բայց թե ազնիվ մեր ցեղը
կորչելու չե զուր տեղը.
ցավն ել ունի իր դեղը:
Ա՛յ, բերել եմ յես մի դանդ,
Ծախ-ծրնդոց,
Մեջը դնդոց:
կատվի վղից մենք կախ տանք,
վոր ինչքան եւ որորա,
վոր ինչքան եւ չորորա,
ստից սատկի, տաղ անի,
դաչն իմանանք գաղանի:
Ե՛, դանդը ո՞վ կախ անի.
— Ալո՛, դո՛ւ:
«Ալո՞ն տանի»:
— Բալո՛, դո՛ւ:
«Բալո՞ն կախե»:
— Չալո՛, դո՛ւ:
«Չալո՞ն կաղ ե»:
— Մատո՛, դո՛ւ:
«Մատո՞ն կարճ ե»:
— Փատո՛, դո՛ւ:
«Եդ ել խի՞ղճ ե»:
— Համբո՛, դո՛ւ:
«Յես տկա՞ր եմ»:
— Չամբո՛, դո՛ւ:
«Ասենք տարա,
բա վոր կատուն գա ինձ վրա՞»:
— Բառն, խտոն թող մեկից
բռնեն կատվի քամակից:
«Ի՞նչ ե խոսում չոր գանդը.
լավ ե՛, դո՛ւ տար եդ գանդը.
եւ ինչ Բառ, ինչ Ֆատան»:
ճատաց Բառն ճատճրտան:

—Լուի՛ր, հանդուգն,
 Կոտորվե՛ք դուք.
 Վախկոտներիդ յեռ թաղեմ.
 Ճա՞ռ ասեմ, թե՞ դանդ կախեմ,—
 գոչեց ջոջը,
 քաշեց պոչը:

ԿԱՊԻԿԸ ՅԵՎ ԱԿՆՈՑՆԵՐԸ

Ծերացել եր կապիկը,
 լավ չեր տեսնում պապիկը.
 առավ ակնոց՝
 մի վողջ կապոց:
 Ակնոցները փոքր ու մեծ՝
 ձեռքերին—եսենց ենենց—
 մին դնում ե իր գլխին,
 մին ել պոչի մեջտեղին,
 մին շիզում ե, թքոտում,
 մին ել սրբում, հոտոտում:
 Հա փորձում ե, հա փորձում,
 բայց ակնոցը չի՛ գործում:
 են պսպղուն ապակին
 լույս չի՛ տալիս պապիկին:
 — Կորչե՛ն,—գոռաց—ջուխտ ու կենտ,
 նա՛ յե հիմար, նա յե խենթ,
 ով լսում ե այդ խոսքին,
 մարդկանց հաղար մի ստին:
 Սրանց մասին
 ինչ վոր ասին,
 սո՛ւտ ե, սո՛ւտ:
 ես ապակին
 խավար աչքին
 ի՞նչ ոգուտ:

Ու կապիկը՝
 ծեր պապիկը,
 խորը վշտով ակնոցները
 ենպես խփեց չոր քարին,
 վոր ջուր կտրած փշրանքները
 կանաչ-կարմիր կապեցին:

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թուի-վուի
 մի ճպուռ,
 վողջ ամառը
 շուռ ու մուռ,
 յերգեց, ճոռաց:
 Մին ել, քնք՛,
 ձմեռը
 փռեց իրա
 թևերը,
 բացեց գորգը
 սպիտակ,
 դաշտերն առավ
 ձյունի տակ:
 Անցան պայծառ
 ուրերը:
 Ել վո՞րն ասեմ,
 ել վո՞րը.
 յերբ ամեն մի
 թիփ տակ
 թե՛ սեղան կար,
 թե՛ ոթյակ:
 Յեկան ուրեր
 ցրտաչունչ.

ճպուռն ընկավ
 լուռ ու մունջ.
 քաղցած փորին
 ել ի՞նչ յերգ.
 ցուրտը տարավ
 վրտ ու ձեռք:
 Զընդր-դընդը
 դողալով,
 ծանր-ծանր
 սողալով,
 նա մրջյունին
 ասում եր.
 — Գլխիդ մատաղ,
 սանձամե՛ր.
 մի ճար արա՛,
 շունչ առնեմ,
 ցրտից սովից
 չմեռնեմ.
 կերակրի՛,
 տաքացրո՛ւ,
 մինչև դարուն
 ապրեցրու:
 — Ի՞նչ խաբար ե,

սա՛նիկս,
 զարմանում եմ,
 ջա՛նիկս.
 Հաշխատեցի՞ր
 ամառը,
 ասա՛ ի՞նչ եր
 պատճառը:
 — Եղպես բանի,
 սա՛նամեր,
 ել ժամանակ
 ո՞վ ուներ:
 են խոտերում
 բուրավետ
 յերգում եյինք

մերոնց հետ:
 — Ուրեմն, դու...
 — Այո՛, յես
 վողջ ամառը
 դեն ու դես
 յերգում եյի
 մշտապես:
 — Յերգում եյիր...
 չա՛տ բարի.
 այժմ ել բռնի
 վեր-վերի,
 քամին ծափ տա,
 դու պարի՛:

ԳԱՅԼՆ ՈՒ ՇՆԵՐԸ

Գայլը մի ուր
 Տեսնում ե, վոր
 'Հովիվները դանակներով
 Կտրատում են մի գեր վոչխար,
 Իսկ չները լուռ, անվրդով
 Թափվել են վար,
 Ղրմուռում չեն,
 Մրմուռում չեն:
 Գայլը նրանց ինչ է ասում.
 — Կտտորվեք գուռ, ի՞նչ վայնասուն
 Կհանեյիք գուռ խմբովի,
 Թե այդ բանը յես անեյի:

ԿԿՈՒՆ ՈՒ ԱՔԼՈՐԸ

Ձնաշխարհիկ
 Իմ աքլորիկ,
 Ձայնդ զիւ-զիւ,
 Վոսկին ծիւ-ծիւ,
 Յերգերիդ մեջ
 Բյուր ելեեջ:
 — Կկո՛ւ քուրիկ,
 'Հուրիկ, Բուրիկ,
 Քո ձայնն ել ե
 Լավ գեղեղում,
 Ծոր ե տալիս
 Ու մղմղում:
 Յերգ եմ լսել
 Յես շատ ու քիչ,
 Բայց չեմ տեսել
 Քեզ պես յերգիչ:
 — Վոսկեփետուր,
 Աստվածատուր,
 Կուզեմ
 Լսեմ
 Ձայնդ անսպառ՝
 Միշտ, անդադար,
 Թեկուղ մի դար:
 — Պուճպուճուրիկ,
 Մի պուտ ջրիկ
 Կկո՛ւ քուրիկ,
 Յերգվում եմ յես՝
 Վոր լուռ ես
 Եսչա՛փ, պո՛ւճուր,
 Ըսպասելով իմ աչքերը
 Կտրում են ջուր:
 Վո՞րտեղից ե քեզ այդպես ձայն՝
 Մաքուր, քնքուշ ու զընդզընդան:

Դուք եղպես եք
 Ամբողջ ցեղով,
 Մի բուռ բան եք
 Թեև տեղով,
 Բայց ձեր յերգը
 Խիստ հաջողակ
 Չունի, չունի
 Վոչ մի սոխակ:
 — Գոհ եմ քեզնից
 — Չիմա՛ն աքլոր.
 Խղճով ասենք,
 Դու միալար
 Լավ ես յերգում
 Դրախտահավից՝
 Թռչունների
 Լավի լավից.
 Վողջ աշխարհը
 Խոսքիս վկա,
 Քեզ պես յերգիչ
 Չրկա՛, չրկա՛:
 Այդտեղ ծիտը՝
 Ծխտիկ-միտիկ,
 Ասավ՝ «Հյա
 Սրա՛նց մտիկ,
 Ի՛նչ լավ գիտեն
 Իրար յեղել.
 Ասա թողնե՞ն
 Պակաս տեղ ել:
 Ե՛, լավ, հերի՛ք իրար գովեք,
 Աշխարհ գիտի, թե դուք ո՛վ եք:

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Կռիվը վերջացավ: Դաշտում ընկած եյին սպան-
 վածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ: Այդ
 կույտերի միջից լավում եյին վերավորների հառաչանք-
 ները:

Մի չորացած առվի յեղերքին պառկած եյին յերկու
 զինվոր, յերկուսն ել ծանր վիրավոր:

Նրանց զգեստները տարբեր եյին: Մի քանի ժամ
 առաջ դեռ կատաղի թշնամիներ եյին:

Այժմ լուռ նայում եյին իրար և ուզում եյին խոսել:
 Բայց իրար լեզու չեյին հասկանում: Հանկարծ ավելի
 յերիտասարդը սողեսող մոտեցավ «Թշնամուն» և մեկնեց
 նրան իր ջրի սրվակը: Հետո յեւ աշխատում եր թաշկի-
 նակով կտրել նրա վերքից հոսող արյունը: Բայց վոչինչ
 դուրս չեկավ, միայն ինքն ավելի թուլացավ, պառկեց,
 քուն մտավ:

Վրա հասավ պարզկա գիշերը: Յուրտ քամին փչում
 եր հեռավոր լեռներից:

Կես գիշերին տարեքավոր զինվորը կրկին մի փորձ
 արավ նստելու, բայց իզուր, արդեն բոլորովին արյու-
 նաքամ եր յեղել:

Աչքը դեց իր հարևանի վրա: Յերիտասարդ զին-
 վորը քնած եր և կուչ եր յեկեղ գիշերվա կարող ցրտից:

— Պիտի սառչի, — անցավ հասակավորի մտքով. —
 անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչքա՛ն եւ յերիտա-
 սարդ ե:

Յերբ արշալույսի դեմ վերավորներին հավաքող
 խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց,
 ուզեց բարձրանալ ու զամբացավ, վոր իր վրա մի վե-
 րարկու կար գցած:

Նայեց շուրջը, նայեց հարևանին: Հարևանը մեռած
 եր և պառկած առանց վերարկվի. նրա վերարկուն եր իր
 վրա:

Ամերիկայի Նյու-Յորք քաղաքում մի մեծ ախոռա-
տան տանիքի տակ կար մի աղավնաբուն, վորտեղ պա-
հում և վարժեցնում էին նամակատար աղավնիներ: Մի
որ մատաղ աղավնիների մրցում պիտի լիներ:

Հետաքրքիր մրցումը տեսնելու համար հավաքվել
էին մի քանի հոգի: Նրանցից մեկին ընտրեցին դատա-
վոր. նա պիտի վճռեր, թե աղավնիներից վո՛րն առաջինը
կմտներ բունը:

Գիտեյին, վոր աղավնիները ճանապարհ պիտի ընկ-
նեն ցերեկվա ժամը 12-ին, իսկ տուն պիտի հասնեն տա-
ներկսից կես անց:

Աղավնիներին բաց թողին:

Դատավորն ու ընկերները բռնեցին իրենց տեղերը
և անհամբեր սպասում էին:

Անցավ բավական ժամանակ: Հանկարծ նրանցից մե-
կը դուրս ելավ:

— Գալի՛ս են, գալի՛ս են:

Տանիքներից մի քիչ բարձր յերևաց սպիտակ ամպի
պես շարժվող մի բան: Աղավնիներն անցան մի քանի
բարձր ծխնելույղների մոտով և, հաղիվ յերկու վայր-
կյան անցած, հասան աղավնատունը:

Աղավնիներից մեկը կապտին տալով սլացավ բուռ-
րից առաջ և ներս մտավ:

— Առնոն է, իմ սիրելի Առնոն, — լսվեց աղավնա-
տիրոջ ուրախ ձայնը: — Յես ասում էյի, վոր նա առա-
ջինը կգա: Նա յերեք ամսական հաղիվ լինի, բայց, տես-
նո՞ւմ եք, մրցման մեջ հաղթողը նա դուրս յեկավ:

Բոլորը հիացած նայում էին Առնոյին:

Առնոյի առաջին թռիչքն էր այդ: Նրա վոտին անց-
կացրին արծաթե ողակ, վորի վրա կար նրա համարը՝
2590:

Յեվ Առնոն Նյու-Յորքի շրջակայքում առաջինը
դարձավ:

Դեռ կես տարի չանցած՝ Առնոն արժանացավ «Նա-
մակատար աղավնիներ պահող ընկերութան» առաջին
պարգևին:

Նամակատար աղավնիների համար ամենադժվարը
ծովի վրայով թռչելն է, ուր չկա վոչ մի ուղեցույց նշան:
Դժվար է թռչել նամանավանդ մառախուղի ժամանակ:

Մի որ Առնոյին յերկու ուրիշ աղավնիների հետ տե-
ղավորեցին մի մեծ նավում, վոր պիտի մեկներ Ամերի-
կայից Անգլիա: Վճռել էին՝ աղավնիներին բաց թողնեն
այն ժամանակ, յերբ ավել բոլորովին կանհետանա:

Շատ չանցած՝ թանձր մառախուղ պատեց ովկիանո-
սը, մինչև հանդիպեցին մի ուրիշ՝ Նյու-Յորք գնացող
նավի: Այդ նավը աղավնիներին պիտի վերադարձներ
տուն: Բայց տասը ժամվա չափ ճանապարհ կտրելուց
հետո մեծ դժբախտութուն պատահեց՝ չոգեմեքենան
վազցավ: Ծոգենավը՝ աչեղի նման այս ու այն կողմն
առնա՛նում, սուլում, ոգնություն կանչում, բայց ոգնող
Վո՛րն Սկավեց մեծ իրարանցում, սարսափը տիրեց բո-
լորին:

Հանկարծ մեկը հիշեց, վոր նավում աղավնիներ
կան: Շտապ ընտրեցին նրանցից մեկին, վորի համարն
էր 2592: Նրա պոչի տակը կապեցին գլանաձև կոլորած
նամակ՝ ջուր չծծող կտորի մեջ դրած: Նրան բաց թո-
ղին, և նա անհետացավ մառախուղի մեջ:

Կես ժամ հետո թողին յերկրորդ աղավնին:

Ամենից վերջը բերին յերրորդ աղավնին, վոր մի
փոքրիկ ու նիհար թռչուն էր: Ծովագնացները վոչինչ
չգիտեյին Առնոյի մասին, միայն տեսան, վոր նրա վո-
տի ողակի վրա գրված է՝

«Առնո, № 2590»:

Առնոյին բռնող նավաստին նկատեց, վոր Առնոյի
սիրտն այնպես չի բարախում, ինչպես առաջին յերկու-
սինը:

Առնոյի պոչի տակ կապած նամակում գրված էր.

«Առաւմտոյան ժամի տասը: Հինգշաբթի: Նալի մե-
քենան կոտորվեց Նյու-Յորքից յերեք հարյուր հիսուն կի-
լոմետր հեռավորութեան վրա: Միանգամայն անողնա-
կան ենք մառախուղի մեջ: Վորքան կարելի յե շուտ մի
նալ ուղարկեք, վոր մեզ այստեղից հանի: Ամեն բոպեն
յերկու անգամ սուշում ենք, մինը կարճ, մյուսը՝ յեր-
կար:

Նալստպետ»:

Նամակը, վոր գրված եր Նյու-Յորքի շոգենաւթային
ընկերութեան հասցեյով, նույնպէս գլանածն վոյորե-
ցին, դրին ջուր չծծող կտորի մեջ, կապեցին Առնոյի
պոչի մեջտեղը, վորից հետո նրան բաց թողին:

Առնոն շոգենաւթի շուրջը մի շրջան կազմեց, հետո
յերկրորդը, յերրորդը և իրար յետեից շրջաններ կազմե-
լով՝ բարձրացավ և բոլորովին կորավ ամպերի մեջ: Նա
անշեղ թռչում եր դեպի աղաւնատուն: Աղաւնու տերը—
Բիլին—նկատեց, վոր մի կապտաւուն աղաւնի նետի
պէս սլացավ լուսամուտից և անմիջապէս պրծավ ջրի
վրա: Բիլին հանկարծ աղաղակեց.

— Իմ սիրուն Առնո՛ն ե յեղել:

Մի րոպե չանցած՝ նամակը Բիլիի ձեռքումն եր:

Առնոն յերեք հարյուր հիսուն վերստն անցել եր 4
ժամ 40 րոպեյով:

Յեւ չանցած մի ժամ՝ անհրաժեշտ ոգնութիւն ու-
ղարկվեց խորտակվող նաւը փրկելու համար:

ԲԱՐԻԿԱԴՆԵՐՈՒՄ

Քաջաբար կովող կոմունարների
Արյունով ներկված բարիկադներում
Բիրտ գինւորները վերցրին գերի
Նաե մի տղա, —տառներկու տարու:

— Ե՛յ, —գոռաց սպան, —սատանայի՛ ճուտ,
Նրանցի՞ց ես, ի՞նչ ե:

— Այո՛, յես ել եմ, միասին եյինք:

— Լա՛վ, —ասաց սպան, —սպասի՛ր քիչ ել՝
Քեզ ել նրանց հետ կուղարկենք... յերկինք...

Ու պայթեց դաժան, մի խոլ համազարկ:

Ու տղան տեսավ, թե ինչպէս՝ անկար

Իր ընկերները, —էանգնած պատի տակ՝
Հնձվող խոտի պէս դիտապաստ ընկան...

Վողջ մարմնով դողաց

Գունատված տղան:

Բայց մոտենալով մուշկ սպային՝

Սկսեց այսպէս

— Պարո՛ն կապիտան,

Թո՛ւյլ տվեք, վոր յես

Մորս իմ վերջին հրաժեշտը տամ

Ու յետ դամ ելի:

— Իսկ ո՞վ կստիպի, վոր յետ դաս ելի.

Ծլկվե՞լ ես ուզում, խաբե՞րա՛ լաւոտ:

— Ո, վո՛չ, կապիտան, յես խոսք եմ տալիս:

— Իսկ ձեր տունն ո՞ւր ե:

— Շատրվանի մոտ:

— Շատ լավ, դե գնա՛:

Ու տղան գնաց:

Նրա յետեից, գինւորները բիրտ,

Սուր քրքջացին.

— Ե՛յ, ե՛յ, կապիտան.

— Այ թե պո՛ւկ տվեց.

— Այ թե լավ խաբեց եդ ճուտը ոճի...

Յեւ գինւորների քրքիջը խառնվեց

Պատի տակ մեռնող խուլ հորնդոցին...

Բայց այդ քրքիշը կտրվեց հանկարծ,
Յերբ տղան վազեց, կանգնեց պատի տակ
Ու գոչեց նրանց՝ համարձակ ու սեղ
— Պարոն կապիտա՛ն,—
Պատրաստ եմ ահա,—դե կրակեցե՛ք...

ԿՈՌՆԵԼ ՊԱՊԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Կոռնելը ջրադացպան էր։ Նա վաթսուն տարի անց
էր կացրել ալյուրի տուպրակների մեջ և շատ էր սիրում
իր հողմադացն ու իր գործը։

Յեվ ահա վարիպցի Փրանսիացիները դեպի մեր
գյուղի կողմը մի մեծ շողեադաց կառուցեցին։

Շողեադացը Կոռնել պապին հասցրեց կատաղու-
թյան։

Մի ամբողջ շաբաթ գյուղն ընկած՝ նա անդադար
վազվզում էր դես-դեն, անվա, գզգզված, աշխատում էր
գյուղացիների միտքը պղտորել։ Նա գոռում-դռնում էր,
թե շողեադացները թունամորում են ալյուրը։

— Մի՛ք գնա ենտեղ,—աղաչում էր նա,—այնտեղ
աղունն աղում են շոգու միջոցով, իսկ շոգին դեի հնա-
րած բանն է։ Ամբողջ վաթսուն տարի յե, վոր քամու
միջոցով էր աշխատում. իսկ ի՞նչ է քամին։ Քամին
ասածու չունչն է։

Յեվ այդպես, յերկար ու յերկար նա գովում էր իր
հողմադացը, բայց նրան լսող չկար։

Յեվ սաստիկ կատաղած՝ ծերուկը փակվեց իր հող-
մադացում և ապրում էր այնտեղ ինչպես վայրի գաղան,
բոլորովին մենակ, մեն-մենակ։

Նա մինչև անգամ իրենից հեռացրեց իր սիրելի թու-
նիկ իվետային։

Հաճախ յերեք չորս մղոն ճանապարհ էր կտրում,
վորպեսզի գտնի իվետային. յերբ իվետան մոտն էր լի-
նում, Կոռնելը նստում էր նրա կողքին, դրկում ու լա-
լիս։

Միայն թե չէր թողնում իր մոտ՝ հողմադացը գալ։
Նա ման էր գալիս բորիկ, ցնցոտիներ հագած, ծակ-
ծրկված գլխարկով։ Նա զգում էր, վոր գյուղացիներն
իր վրա ծուռ են նայում։ Վոչ վոք այլևս աղուն չէր բե-
րում Կոռնել պապի մոտ։ Թվում էր, թե հողմադացը
վաղուց կանգնած պիտի լիներ։ Այնինչ շարժվում էին
նրա թևերը, անդադար դառնում։

— Ի՞նչ է աղում Կոռնել պապին,—հարցնում էյին
համագյուղացիները։

Յերեկոները տեսնում էյին, թե ինչպես ծերունին իր
բեռնամորված իշուկն առաջն արած՝ քշում էր։

— Բարի իրիկուն, Կոռնել՝ պապի,—կանչում էյին
գյուղացիները։—Քո հողմադացը կարծես դեռ աշխա-
տում է։

— Հա՛, քիչ-միչ,—ուրախ պատասխանում էր ծե-
րունին,—աշխատանք կա։

Գյուղացիները զարմացած հարցնում էյին.

— Ախր ո՞ւմ աղունն էս աղում։ Չե՞ վոր մենք բո-
լորս աղունը շողեադացն ենք տանում։

Ծերունին մատը դնում էր շրթունքներին և լուրջ
պատասխանում.

— Գրողը տանի, իմ հողմադացն աշխատում է վոչ
թե ձեզ համար, այլ ուրիշ գյուղերի համար։

Ել ուրիշ վոչինչ չէր կարելի դուրս քաշել նրանից։

Դռնից նայել չէր լինում, վոր տեսնեյին, թե ի՞նչ է
կատարվում հողմադացում։

Մինչև անգամ իվետան էլ չգիտեր։

Հողմադացի փոքրիկ դռնակի միշտ փակ էր։ Ահա-
դին թևերը ճոճոտյով պտտվում էյին։

Ինչպես յերևում էր, Կոռնել պապը մի գաղտնիք
ուներ։

Ամեն մեկն իր գուշակութիւնն եր անում այն մասին, թե ի՞նչ ե կատարվում Կոռնել պապի հողմաղացի ներսում: Բոյորն ե կարծում եյին, վոր Կոռնել պապի հողմաղացում փողի տոպրակներն ալյուրի տոպրակներէց ալելի շատ են: Այդ ե պատճառը, վոր ժլատ ծերունին փախչում ե մարդկանցից ե հողմաղացի դուռն ել միշտ փակ ե պահում:

Մի օր վերջապես բացվեց Կոռնել պապի դադարները:

Յես մտածեցի, մտածեցի ե բռնեցի հողմաղացի ճամբան: Յես ձայն տվի բանալու անցքից ե հայտնեցի, թե կարևոր գործով եմ յեկել: Ինչ արի չարի, ներս չթողեց: Գնացի, վոր յերեխաներին պատմեմ անհաջողութեանս մասին: Յերեխաները հույսները չկորցրին: Նրանք վճռեցին՝ մի կերպ ներս մտնեն Կոռնել պապի հողմաղացը:

Յերբ նրանք մոտենում են հողմաղացին, Կոռնել պապն աշխատեղ չի լինում:

Դուռը փակված ե լինում յերկու կողպեքով: Ծերունին մոռացել եր վերցնել շարժական սանդուխքը: Յերեխաները սանդուխքով վեր են բարձրանում, վոր լուսամուտից ներս մտնեն ե տեսնեն, թե այդ խորհրդավոր հողմաղացում ի՞նչ ե կատարվում:

Տեսնում են ի՞նչ:

Աղացող քարերը չեն շարժվում:

Վո՛չ մի տոպրակ:

Վո՛չ մի հացահատիկ:

Ալյուրի փոշու հետք վո՛չ մի ալրատանը ե վո՛չ մի պատի վրա:

Մինչև անգամ նոր աղացած ցորնահոտն ել չի գալիս: Միայն մի անկյունում յերեք-չորս չցրած տոպրակ կա: Ի՞նչ ե նրանց մեջ—ալյու՞ր, թե՞ հացահատիկ: Յերեխաները նայում են տեսնում, վոր վերեւի տոպրակի ծակից մանր քարեր ե ավազ ե թափվում:

Ահա՛ Կոռնել պապի դադարները:

Այդ ավազը, աղբը նա ամեն իրիկուն ցանում եր

ճանապարհներով, վորպեսզի ազատի, փրկի իր հողմաղացի պատիվը ե ուրիշներին մտածել տա, վոր ինքը հացահատիկ ե աղում:

Խե՛ղճ հողմաղաց: Խե՛ղճ Կոռնել պապի:

Վաղո՛ւց արդեն շողեաղացը խել եր նրանից վերջին աշխատանքը:

ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ

Յելի՛ր, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ ե ե ստրուկ:

Արդեն վառվում են մեր սրտերը,

արդեն կովի յենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կփորենք մենք

մինչև հիմքերը ե հետո

մեր նոր աշխարհը կչինենք մենք,

ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե վերջին կռիվը

ե պայքարը մեծ:

Ինտերնացիոնալը

աշխարհը կը փրկե:

Վոչ վոք չի տա մեր փրկութիւնը,

վոչ խենթ հերոսը, վոչ արքան:

մենք պետք ե մեր ազատութիւնը

կոենք ձեռքով մեր սեփական:

Վորպեսզի շուտ փչրենք մեր լուծը

ե յետ խոնք վողջ հողը մեր—

խոնք մուրճերը, տանք մեր ուժը,

քանի յերկաթը տաք ե դեռ:

Սա յե վերջին կռիվը

ե պայքարը մեծ:

Ինտերնացիոնալը

աշխարհը կը փրկե:

Լոկ մե'նք, ճորտեր ու բանվորներս
 ունենք անխախտ մի իրավունք՝
 ասել, վոր հողը մերն է, մերն է,
 կորչի հարուստը թող տգրուկ:
 Յեվ յերբ պայթի մեծ փոթորիկը,
 և կուշտ շները չքանան,
 նորից յերկիրը և յերկինքը
 մերն են ու մերը կմնան:

Սա յե վերջին կռիվը
 և պայքարը մեծ:
 Ինտերնացիոնալը
 աշխարհը կը փրկե:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Աշխատանքի յերգը—Հակոբ Հակոբյան	3
2. Կաթնավար — Հ. Հակոբյան	4
3. Քաջ սահակը—Արագի	4
4. Լեւին քեռին—Յե. Չարեկց	8
5. Ընկերները — Յե. Չարեկց	10
6. Կարմիր արագիլը—Ստ. Ջորյան	11
7. Փոքրիկ լրագրավաճառը—Ա. Վշտունի	18
8. Դու իմ փոքրիկ հոկտեմբերիկ—Ա. Վշտունի	19
9. Լառ-Հո — Վ. Թոքովեկց	19
10. Կոմունան — Գ. Մահարի	23
11. Պատմվածք տրամվայի մասին—Մ. Սրմեն	24
12. Առավոտը — Ալազան	27
13. Ալիկն ու Լալիկը—Ալազան	28
14. Հիդրոկայան կառուցողները—Ալազան	30
15. Կարմիր բանակայինի վերադարձը—Ն. Զարյան	32
16. Հունձր — Ն. Զարյան	33
17. Զրանցի բացումը—Մ. Մանվելյան	34
18. Հարյուր վորդին աստուծո, թարգմ. Դ. Գրիգորյան Դ. Բեյլի	36
19. Շուկար սլապի մանկութունը—Մ. Շուլիսով	37
20. Գարուն — Վ. Նորեկց	40
21. Կարմրախայտի վորսը—Վ. Ամանյան	41
22. Սամին, թարգմ. Վ. Նորեկց—Ն. Տիխոնով	42
23. Փոքրիկ վալտեյան—Մ. Ուլյանովա	47
24. Ուղիղ ժամը 4-ին—Զ. Զորիչ	50
25. Բալլադ — Գ. Սարյան	53
26. Բերքի յերգը—Գ. Սարյան	54
27. Նամակ Լենինին—Զամոյսկի	56

28. Դարբիններ, թարգմ. Գ. Աբով—Շկուլեր	61
29. Պարմա քաղաքի յերեխաները—Մ. Գորկի	62
30. Ամառ — Ղ. Աղայան	65
31. Յերկու ընկերներ—Ղ. Աղայան	66
32. Քեռի ինչանը—Հովհ. Թումանյան	66
33. Կաքավի յերգը—Հ. Թումանյան	70
34. Գելը — Հ. Թումանյան	71
35. Հսկան — Հ. Թումանյան	76
36. Սուտլիկ վորսկանը—Հ. Թումանյան	83
37. Չարի վեջը—Հ. Թումանյան	85
38. Մայրը—Հ. Թումանյան	90
39. Գառը մեր տալիս—Վ. Միրաբյան	91
40. Յեզը տարան—Հ. Շուրուբյան	92
41. Մկների ժողովը—Խնկո Ապեր	94
42. Կապիկն ու աղնոցները—Խնկո Ապեր	96
43. Չարուն ու մրջյունը—Խնկո Ապեր	97
44. Գայլն ու չնեը—Խնկո Ապեր	98
45. Կկուկն ու աքլորը—Խնկո Ապեր	99
46. Թշնամիները — Վ. Գարշին	101
47. Առնո — Ե. Սետուն Տումպսոն	102
48. Բարիկադներում, թարգմ. Ս. Տարոնցի—Վ. Հյուգո	104
49. Կռնեղ պապի դադանիքը—Ա. Դոդե	106
50. Ինտերնացիոնալ—Թարգմ. Յե. Չաբենց	109

«Ազգային գրադարան»



NL0242186

ԳԻՆԵ 1 Բ.
ԿԱԶԱՐԵ 30 ԿԱԳ.

9536

Арм.

12-1412



**ХРЕСТОМАТИЯ
ПО ЛИТЕРАТУРЕ**

Для начальных школ

Третий класс

Составили

С. ТАРОНЦИ, Г. ГАЗАРЯН

Гиз. ССР Армении, Эривань 1934